

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՆԻՍՏԸ

ԱՅՍՕՐ ԵՒՍ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ



Խորհրդարանը երեկ գումարեց լիազումար Նիստ մը, որուն ընթացքին խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի Նշեց, որ Նիստը կառավարութեան գործունէութեան ընդհանոր ըննարկման համար Է եւ ոչ թէ հարցաքննութեան կամ հաշուետուութեան:

Ան աւելի ուշ ալ խօսքը Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ժըպրան Պասիլին ուղղելով յայտնեց. «Պատրաստ ենք յառաջիկայ ամիս կառավարութեան հարցաքննութեան Նիստ մը գումարելու»՝ աւելցնելով, որ ընդհանոր ըննարկման Նիստի եւ հարցաքննութեան ու հաշուետուութեան Նիստի միջեւ շփոթ տեղի ունեցած է:

Վարչապետ Նաուաֆ Սալամ Նիստի սկիզբը խօսք մը արտասանելով յայտնեց. «Անցեալ մարտին Լիբանան ներգրաւուեցաւ պատերազմի մը մէջ, որ մենք չընտրեցինք, Նոյնիսկ զայն մղելու մեր կարծիքը չհարցուեցաւ: Պատերազմը Լիբանանին աւելի քան 20 միլիառ տոլար արծեց, եւ անոր ընդհանուր գինը կրնայ, 2026 պատերազմի հաշիւը ամբողջանալէն ետք 27 միլիառ տոլարը անցնիլ: Տակաւին 250 հազար լիբանանցի տեղահանուածներ կան»:

«Գիտեմ լիբանանցի ընտանիքներուն ցաւը եւ գիտեմ, թէ ապրանքներուն եւ հիմնական կարիքներու գինը որքան բարձրացաւ: Եթէ ապրուստի այս իրավիճակը հետեանք Է կուտակուած ճգնաժամերու, պատերազմը անշուշտ զայն բարդացուց, սակայն այս իրողութեան անձնատուր պիտի չըլլանք», ըսաւ ան:

«Զանդումի տարողութիւնը պետութեան կարողութենէն շատ աւելի մեծ է, եւ տեսական վերաշինութիւն չկայ առանց ֆինանսաւորման, չկայ ֆինանսաւորում առանց վստահութեան, եւ չկայ վստահութիւն առանց կարող պետութեան», Նշեց վարչապետը:

«2027 թուականի պետական ամավարկի նախագիծին մէջ մեր ընտրանքը պիտի հիմնուի կայունութեան պահպանման վրայ»՝ պիւտճեական բացին փոխարէն, որ վերիվայրումներ կը պատճառէ եւ վստահութիւնը կը խաթարէ», յայտնեց Սալամ:

«Վառելանիւթերու գինի համաշխարհային մակարդակի վրայ բարձրացումը ոչ ոքի իրաւունք կու տայ մարդոց ելեկտրականութեան կարիքը շահագործելու», շեշտեց վարչապետը:

«Իր արաբական շրջապատին հետ Լիբանանի կտրուած կապերը վերականգնել յաջողելէ ետք, կրցանք ղեպի շարք մը արաբական պետութիւններ մեր արտածումները աւելցնել», ըսաւ ան:

«Ես իմ խորին երախտագիտութիւնս կը յայտնեմ լիբանանեան բանակին, որ հարաւային Լիբանանի մէջ իր տեղակայումը կ'ընդլայնէ», յայտնեց ան՝ ընդգծելով. «Քանի տակաւին հարաւային Լիբանանի մէջ պատերազմը կը շարունակուի, անվտանգութիւն կամ կայունութիւն պիտի չըլլայ: Մենք կ'ուզենք դադրեցնել պատերազմը, եւ մեր նպատակն Է Իսրայէլի մեր բոլոր հողերէն հեռացումը, գերիներու վերադարձը եւ վերաշինութիւնը»:

«Իսրայէլի հետ ուղղակի բանակցութիւնները դիւրին բան մը չեն, եւ Լիբանան կառչած Է իր բոլոր հողերուն վրայ իր գերիշխանութեան, եւ գերիշխանութիւնը լիբանանեան բոլոր հողերէն Իսրայէլի հեռացում կ'ենթադրէ, ինչպէս նաեւ պետութեան իր սեփական ուժերով վերահսկողութեան տարածումը եւ զենքը իր մենաշնորհը դարձնելու աշխատանք տանիլ», Նշեց վարչապետը:

«Լիբանանը ուրիշներուն ձեռքը խաղաքարտ չէ բանակցութիւններուն մէջ, որոնցմէ ինք կը բացակայի», շեշտեց ան:

«Պատերազմի եւ խաղաղութեան որոշումը պէտք Է միայն պետութեան ձեռքը ըլլայ», Նշեց Սալամ՝ աւելցնելով. «Բանակցութիւններուն յաջողութեան կամ ձախողութեան վերաբերեալ վճիռը անոնց վերջնական արդիւնքներուն համեմատ կ'ըլլայ»:

Հաւատարմութիւն դիմադրութեան երեսփոխանական պլոքի անդամ Ալի Ամմար յայտնեց. «Դիմադրութիւնը պիտի մնայ, քանի տակաւին մեր հողերէն մէկ թիզ գրաւուած կը մնայ»:

«Պիտի ուզէի, որ վարչապետ Նաուաֆ Սալամը չորդեգրէ Լիբանանի դեմ Իսրայէլի, Նոյնիսկ Դիմադրութեան ի յայտ գալէն առաջ, յարձակումի պատմութիւնը անտեսելու ժամանակը չունի»:

Խորհրդարանի փոխնախագահ Էլիաս Պու Սաապ Նշեց. «Պայմանները արտակարգ են, եւ իրավիճակը դիւրին չէ, սակայն ատիկա չի Նշանակեր, թէ կառավարութիւնը երկրին մէջ կայունութիւն ստեղծելու ժամանակը չունի»:

«Կը յուսանք, որ վարչապետ Նաուաֆ Սալամ կը բացատրէ, թէ «Չորջազձային համաձայնութիւնը» ի՞նչ է, եւ այդ համաձայնութեամբ ի՞նչ կը նախատեսէ իրագործել», ըսաւ ան:

Ժողովրդավարական հանդիպում երեսփոխանական պլոքի անդամ Հատի Ապու Հասան Նշեց. «Շրջազձային համաձայնութեան համաձայն չենք, որովհետեւ մեզ մանրամասնութիւններով ողողեց, եւ մենք բանակցութիւններուն ամբողջութեան հետեանքով մեծ ճգնաժամի մէջ ենք»:

«Կ'ուզենք բանակցութիւն մը, որ իրաւունքները կ'երաշխաւորէ եւ գաւոնը ամբողջական կերպով կը վերադարձնէ: Պահանջուածը ազգային կեցուածքի միաւորումն Է, համաձայնութիւնը վերատեսութեան ենթարկելը եւ բանակցային յստակ քաղաքականութեան մշակումը», աւելցուց ան:

«Իսրայէլ կ'ուզէ աշխարհագրական խոր իրողութիւն պարտադրել», շեշտեց Ապու Հասան՝ հարց տալով. «Իսրայէլին ինչու թիկունք կանգնելու երկու պատերազմներու ճամբով պատրուակ տրուեցաւ»:

Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար Ժըպրան Պասիլ Նշեց. «Մենք միակ ընդդիմութիւն ենք»:

Մենք Իսրայէլի հետ բանակցութեան հետ ենք, սակայն բանակցութիւնը պատերազմի շարունակման ծածկոյթ չէ, այլ զայն դադրեցնելու, եւ մենք զինադադարի համաձայնութեան եւ խաղաղութեան համաձայնութեան հետ ենք, սակայն ոչ անձնատուութեան», շեշտեց Պասիլ:

Շար.ը՝ Էջ 8

ՎԱՆԱ. «ՀՈՒՍԻՆԵՐՈՒՆ ԿԱՐՄԻՐ ԾՈՎՈՒՆ ՄԷՋ

ՄԱՅՈՒՆ ԿՂՁԻՆ ԳՐԱԽԵԼՈՒ ՔԱՅԼՈՎ ՄՏԱՀՈԳ ԵՆՔ»

Միացեալ Նահանգներու փոխնախագահ Ճէ. Տի. Վանս մտահոգութիւն յայտնեց հուսիներուն Կարմիր ծովուն մէջ Մայուն կղզին (նաեւ ծանօթ՝ Փերիմ անունով, «Ա.») գրաւելու քայլով, միեւնոյն ժամանակ այն կարծիքը յայտնելով, թէ կացութիւնը վերահսկողութեան տակ Է:

Պատասխանելով հուսիներուն Մայուն կղզիին տիրելուն մասին հարցումի մը՝ Վանս ըսաւ. «Անշուշտ, կացութիւնը մտահոգիչ է, անիկա կացութիւն մըն Է, որուն մօտէն կը հետեւիք: Մենք տեսական կապի մէջ ենք շրջանին մէջ վնասուած կողմերուն, այսինքն՝ Արաբական Միացեալ Նահանգներու, Մետական Արաբիոյ եւ ուրիշներու հետ»:

Վանս աւելցուց, որ իրենք «նաեւ ինքնին հուսիներուն հետ ուղղակի բանակցութիւններ» կը վարեն:

«Ուստի կը կարծենք, թէ կացութիւնը վերահսկողութեան տակ է», ըսաւ ան:

Միացեալ Նահանգներու փոխնախագահը Նշեց, որ շրջանը անընդհատ փոփոխութեան ենթարկուող ընթացքի մէջ Է:

Միւս կողմէ, «Պումպըրկ» հաղորդեց, որ Մետական Արաբիան Բրիտանիոյ վարչապետ Էստի Պըննհամէն զինուորական եւ դիւանագիտական օգնութիւն խնդրած Է հուսիները զսպելու եւ քարիւղի ենթակառոյցներու վրայ յարձակումներէն պաշտպանուելու համար:

Լրատու գործակալութեան տեղեկութիւններով՝ Լոստոն պատրաստակամութիւն յայտնած Է օգնելու Ռիա-



տին շրջանին մէջ կայունութեան պահպանման հարցին մէջ եւ արդէն զինուորական խորհրդականներ ուղարկած Է թագաւորութիւն:

Բրիտանացի պաշտօնեաները զգուշացուցած են Պըննհամը, որ հուսիներուն կողմէ Պապ Մանտեպի Նեղուցի հաւանական գրաւումը կրնայ «աղետալի ազդեցութիւն» ունենալ միջազգային նաւագնացութեան եւ համաշխարհային տնտեսութեան վրայ:

«Ֆայնենշըլ Թայմզ» նախքան այդ յայտնած էր, որ Մետական Արաբիոյ գահաժառանգ Մոհամետ Պըն Սալման իշխանը Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփին դիմած է՝ հուսիները զսպելու համար օդային ծածկոյթ տրամադրելու խնդրանքով, սակայն Թրամփ մերժած էր անոր խնդրանքը՝ պատճառաբանելով, թէ ներկայիս Իրանի վրայ կեդրոնացած Է:

ԿԱԼՈՒՁԻՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԱՌԱՆՅ ՄՈՒՏՔԻ

ԱՐՏՕՆԱԳԻՐԻ ԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՐՈՇԱԿԻ

ԺԱՄԿԵՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼԷ ՀՐԱԺԱՐԻԸ ՊՐԻԺՍԵԼԻ

ԽՈՍՏՈՒՄՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՆՔԱՅԻՆ ԸԼԼԱԸ ՅՈՅՑ ԿՈՒ ՏԱՅ»

Եւրոպական յանձնաժողովին կողմէ Հայաստանի հետ առանց մուտքի արտօնագիրի դրութեան հաստատման որոշակի ժամկետները հաստատելէ հրաժարիլը Պրիքսելի՝ հանրապետութեան «Եւրոպական ապագայ»-ի մասին խոստումներուն պատրանքային ըլլալը ցոյց կու տայ: Այս մասին «Իզվեսթիա»-ին յայտարարած Է Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարար Միխայիլ Կալուզինը:

«Օրինակ՝ բոլորովին վերջերս, երբ Եւրոպական յանձնաժողովին մէջ, ըստ Էուրթեան, ուղղակի կերպով հերքեցին Նիկոլ Փաշինեանի միկնէ 2029 թուականի մուտքի արտօնագիրի ազատականացման հասնելու մասին խօսքերը: Ատիկա կ'ընդօժէ «հիասքանչ եւրոպական ապագայ»-ի խոստումներուն ամբողջ պատրանքայնութիւնը եւ հայկական պետութեան նկատմամբ Պրիքսելի օգտապաշտ ընկալումը», ըսած Է դիւանագետը:

Անոր համաձայն, Մոսկուայի մէջ այն կարծիքը ունին, թէ եւրոպական երկիրները Հայաստանը կ'ընկալեն նախ եւ առաջ սեփական տնտեսական եւ քաղաքական շահերու տեսանկիւնէ:

«Իրենց խնամարկեալներուն» մէջ եւրոպացիները կը տեսնեն միայն հարստութիւններու, աշխատուժի աղբիւր, ինչպէս նաեւ լիովին ապարդիւնաբերականացուած իրենց սեփական ապրանքներու եւ ծառայութիւններու սպառման շուկայ, ներառեալ անվտանգութեան ապահովումը, որուն համար ստիպուած են բոլոր իմաստներով սուղ վճարել», աւելցուցած Է Կալուզին:

Անդրադառնալով Գիւմրիի ռուսական ռազմակալանի հարցին՝ Կալուզին յայտարարած Է. «Հայկական

կողմէն Գիւմրիի մէջ տեղակայուած ռուսական ռազմակալանի դուրսբերման վերաբերեալ դիմումներ չենք ստացած: Մենք նախկինին պէս կը մեկնիք այն բանէն, որ անիկա Հայաստանի եւ Հարաւային Կովկասի անվտանգութեան ճարտարապետութեան կարեւոր տարր Է»:

Կալուզին համաձայն, ռուսական զինուորական ներկայութեան Նիւթը այժմ աշխուժ կերպով կը քննարկուի Հայաստանի հասարակական-քաղաքական տիրոյթին մէջ, սակայն Մոսկուան տակաւին ատոր իրական այլընտրանք չի տեսներ:

«Շատերը ամբողջովին արդարացիօրէն կը հարցընեն. իսկ ո՞րն Է այլընտրանքը: Այսօրուան դրութեամբ, մեր կարծիքով, այդպիսին չի նկատուիր: Անկեղծօրէն, դժուար Է պատկերացնել այս դերին մէջ, օրինակ՝ ֆրանսացի զինուորները: Թելուզեւ Հայաստանէն Ֆրանսայի աշխարհագրական հեռաւորութեան ուժով», Նշած Է Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարարը:

Կալուզին աւելցուցած Է, որ Ռուսիան պատրաստ Է քննարկել Հայաստանի հետ պաշտպանութեան եւ անվտանգութեան ոլորտի համագործակցութեան շարունակութիւնը, ներառեալ վարչապետ Նիկոլ Փաշինեանի առաջարկած երկկողմանի յարաբերութիւններու «գոյքագրման» ծիրին մէջ:

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին նախապէս յայտարարած էր, թէ Ռուսիան պատրաստ Է իր զինւորները դուրս բերել Հայաստանէն, եթէ Երեւանը նման խնդրանքով դիմէ: Փաշինեան աւելի ուշ ըսած էր, որ Հայաստան պիտի չառարկէ, եթէ Ռուսիան համապատասխան որոշում տայ:


ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԱՅՑԵԼԵՑ

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ՃԱՓՈՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ, խորհրդարանի արտաքին հարցերու յանձնախումբի քարտուղար Յակոբ Բագրատունի հանդիպում ունեցաւ Լիբանանի մէջ ճափոնի ղեպալան Եոդոթա Քինժիի հետ, Պաապարկի մէջ:

Ք և ն ա ր կ ու յ ց ա ն խորհրդարանական դիւանագիտութեան կարելութիւնը եւ երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւններու ամրապնդման հեռանկարները:

Հանդիպումին ներկայ լիբանանցի այլ երեսփոխաններ շնորհակալութիւն յայտնեցին ճափոնին



Ներկայ զգայուն պայմաններուն մէջ Լիբանանի նկատմամբ ցուցաբերուած հաստատուն զօրակցութեան համար:

ՊԸՐՐԻԻ ԴԵՏ ԴԵՈԱԶԱՅՆԱՅԻՆ
ՉՐՈՅՑԻ ԸՆԹԱՑՔԻՆ

ԱՐԱՂՉԻ ԻՐԱՆԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅԱՅՏՆԷ ԼԻՔԱՆՆԻ ԴԻՄԱԳՐՈՒԹԵԱՆ



Իրանի արտաքին գործոց նախարար Ապաս Արաղչի հեռաձայնեց խորհրդարանի նախագահ Նե-պիի Պըրրիի:

Հեռաձայնային հաղորդակցության ընթացքին երկու կողմերը քննարկած են շրջանային զարգացումները և անհրաժեշտությունը շրջանի երկիրներում միջեւ համակարգումի ամրապնդման՝ Լիբանանի եւ շրջանի այլ երկիրներու վրայ սիոնական վարչակարգին կողմէ տիրապետության եւ պատերազմներու հրահրման ջանքերը դիմակայելու համար:

Իրանի արտաքին գործոց նախարարը Իրանի տեւական նախանձախնդրությունը յայտնած է Լիբանանի ազգային գերիշխանության ու հողային ամբողջականության պահպանման նկատմամբ՝ ընդդեմ իսրայելեան վարչակարգի յարձակումներուն:

Ան ընդգծած է Իրանի Իսլամական Հանրապետության լիակատար աջակցությունը բռնադրաւումին լիբանանեան քաջարի Դիմադրության նկատմամբ՝ ընդդեմ սիոնական վարչակարգի բռնադրաւումին ու յարձակումներուն:

Լիբանանի խորհրդարանի նախագահը իր կարգին իր գնահատանքը յայտնած է Իրանի Իսլամական հանրապետության Լիբանանի նկատմամբ ցուցաբերած աջակցության համար եւ ներկայացուցած է հարաւային Լիբանանի մէջ ներկայիս տիրող կացությունը:

Պըրրի Լիբանանի դեմ Իսրայելի գործած ոճիրները նշելով՝ յիշեցուցած է միջազգային ընտանիքին ու իսլամական պետություններուն Իսրայելի օրէնքի խախտումները դադրեցնելու, ոճրագործները հաշտեւորության ենթարկելու եւ պատժելու իրաւական ու բարոյական պարտաւորությունը:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ՝ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Օրինութեամբ՝
ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Կիրակի, 20 սեպտեմբեր 2026-ին, Անթիլիասի մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, ինչպէս նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերու բոլոր եկեղեցիներուն մէջ, յընթացս սուրբ եւ անմահ պատարագին, պիտի կատարուի Հանրապետական մաղանք եւ Հայաստանի Հանրապետության դրօշի օրհնություն՝ հայրենիքին վերանկախութեան 35-րդ տարեդարձին առիթով: Սուրբ պատարագը սկիզբ պիտի առնէ ժամը 10:00-ին:

Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի զաւակներուն մասնակցելու սուրբ պատարագին, որպէսզի միասնական աղօթքներով խնդրենք Ամենակալէն, որ ամուր ու անսասան պահէ մեր հայրենիքը եւ զայն փրկէ ամեն տեսակ փորձություններէ:

ԴԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ԱՄԱԼ ԵՒ ՀՐԶՊԱԼԼԱ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՄԻՐ ԳԻԾ ԿԸ ՆԿԱՏԵՆ



Հրգպալլայի եւ Ամալ շարժումի ղեկավարությունները ներկայացնող Հրգպալլայի գործադիր խորհուրդի նախագահ Շէյխ Ալի Տահմուշ եւ Ամալ շարժումի գործադիր մարմնի նախագահ տոքթ. Մուսթաֆա Ֆուանի գումարեցին ժողով մը, որուն ընթացքին քննարկեցին լիբանանեան բեմին վրայ արձանագրուող վերջին զարգացումները՝ Լիբանանի գտնուած զգայուն պայմաններուն եւ անոնց յառաջացուցած քաղաքական, ազգային, տնտեսական ու ընկերային մարտահրաւերներուն լոյսին տակ:

Ժողովի աւարտին Ամալի եւ Հրգպալլայի ղեկավարությունները միացեալ հաղորդագրություն մը հրապարակելով շեշտեցին, որ քաղաքացիական խաղաղությունը կարմիր գիծ եւ ազգային հասարակաց պատասխանատուութիւն է, եւ իրենց կը մերժեն բոլոր ձեւի հրահրումները, լարուածութեան ստեղծումներն ու սադրանքները, ինչպէս նաեւ կ'ընդգծեն, որ վիճելի հարցերը պէտք չէ լուծուի մազլումի, այլ երկխօսութեան, փոխըմբռնման եւ հաստատություններուն վստահելու միջոցով՝ քաղաքացիական խաղաղութեան սպառնացող եւ լիբանանցի ժողովուրդին վրայ բեռը մեծցնող կացություններուն մէջ յայտնուիլը կանխարգիլելու համար:

Ամալի եւ Հրգպալլայի ղեկավարությունները բոլոր քաղաքական ուժերուն կոչ ուղղեցին՝ ներկայ փուլին մօտենալու ազգային բարձր պատասխանատուութեան զգացումով, հեռու մնալու նեղ հաշիւներէն եւ պառակտումը մեծցնող մօտեցումներէն, ինչպէս նաեւ կեանքի կոչելու հաղորդակցութեան եւ համակարգման ուղիները, որովհետեւ Լիբանան չի կրնար դիմակայ յաւելեալ խափառումներու կամ լարուածութեան, եւ անիկա խիստ կարիք ունի փոխըմբռնման, արդիւնաւետ աշխատանքի եւ համաձայնեցուած ջանքերու:

«Ներկայ փուլէն դուրս գալը կը պահանջէ համապարփակ քաղաքական կամք՝ պաշտպանելով ազգային շահերը, ճգնաժամերու կառավարումէն անցում կատարելու դէպի անոնց պատճառներու լուծումը եւ ճամբայ բանալով դէպի Լիբանանը պաշտպանելու, վերականգնում, ժողովուրդի վերադարձի եւ պետութեան ու անոր հաստատություններու ոտքի կանգնման խորագիրով նոր փուլ», նշեցին անոնք:

ԼԻՔԱՆՆԵԱՆ ԿԱՐԾ ԼՈՒՐԵՐ

• «ԱՄԱՍ». «Ուաշինկթընի մէջ Լիբանանի եւ Իսրայելի դեսպաններուն հանդիպումը բանակցային լուրջ օրակարգ կամ նոր փաստաթուղթ չունի, այլ հանդիպում մըն է, որուն նպատակը Հռոմի ժողովի յետաձգումէն ետք հոլովոյթին պատկերը կենդանի պահելն է: Արդարեւ, ո'չ Լիբանանի դեսպանը կարողութիւնը ունի դիրքորոշման փոփոխութիւն կատարելու, ո'չ ալ Իսրայելի դեսպանը լիազօրուած է զիջում կատարելու»:

• ԻՍՐԱՅԷԼԵԱՆ «Հարտեց» օրաթերթը. «Միացեալ Նահանգներու մէջ Լիբանանի եւ Իսրայելի դեսպանները այս շաբաթ Ուաշինկթընի մէջ հանդիպում պիտի ունենան՝ Իսրայելի եւ Լիբանանի միջեւ հաղորդակցութիւնը բաց պահելու փորձով մը՝ վերջերս անոր ծախսողութենէն եւ Հռոմի մէջ նախատեսուած բանակցություններուն յետաձգումէն ետք»:

• ԴԻԱՆԱԳԻՏԱԿԱՆ հաղբիրներ «Տիար» օրաթերթին. «Սեւոտի պատուիրակ Պըն Ֆարհանի ճամբով հասաւ սեւուական «պատգամ» մը, որ բոլորին յիշեցուց, թէ Սալամի կառավարութիւնը «կարմիր գիծ» է, եւ ներկայիս կարելի չէ խաղալ ներքին հաւասարակշռություններուն հետ: Շարք մը պաշտօնատարներ այդ նոյն պատգամը նաեւ լսեցին Միացեալ Նա-

հանգներու դեսպան Իսայէն, որ ներկայ կառավարութիւնը բանակցային հոլովոյթին հետեւելու համար անհրաժեշտութիւն նկատեց»:

• ԵՐԵՄՓՈՒՆԱՆԱԿԱՆ ականաւոր հաղբիրներ «Տիար» օրաթերթին. «Կառավարութիւնը պիտի չտապալի, սակայն կարելի է ըսել, որ տնտեսական, ապահովական եւ քաղաքական ձեռքբերումներու բացակայութեան լոյսին տակ պիտի «ցնցուի», եւ խորհրդարանական նիստերու աւարտէն ետք յստակ պիտի դառնայ, որ առանց սեւուական-ամերիկեան ծածկոյթին անիկա մէկ օր իսկ պիտի չգոյատեւէր»:

Շաբ.ը՝ էջ 8

**ԱԶԱՅԻՆ
ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՔՈՒՆԵԾ**

**2026-2027 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ
ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

- Հին եւ Նոր աշակերտներու արձանագրությունները կը շարունակուին ամեն օր ժամը 8:30-12:30:

- **ՎԵՐԱՄՈՒՏ.**
Թ. եւ ԺԲ. դասարաններ՝ 16 սեպտեմբեր
Ա. - ԺԱ. դասարաններ՝ 23 սեպտեմբեր
Մանկապարտեզ՝ 1 հոկտեմբեր

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

Ռուս չեր - 111 *Այնթաք - 87*

**Տ. Սոմսե Աւագ Քին. Երիգեանի
« Յուշեր » Հարորի Փինեծով**
(Գառնի մատենաշարի հրատարակություն)

Գիրքը կը ներկայացնէ՝ **ընկ. Եսայի Հաւաթեան**

Գեղարուեստական յայտագիր

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 16 Սեպտեմբեր 2026-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, Այնճարի « Ս. Զեյթեան » կեդրոնէն ներս:

*Ռուս չեր - Այնթաքի
Թանգարանի Հանձնախումբ* *Դրասեր*

**ՍՈՒՄԱԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 111-ԱՄԵԱԿ ԵՒ
ԱՅՆՃԱՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 87-ԱՄԵԱԿ**

• Չորեքշաբթի, 16 Սեպտեմբեր 2026
ՍՈՒՄԱԼԵՐ - ԱՅՆՃԱՐԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՐ՝ ՍՈՒՄԱԼԵՐ ԱՄԱԳ ԲՅԱՅ, ԵՐԻԳԵԱՆԻ «ՅՈՒՇԵՐ» ՀԱՏՈՐԻ ԳԻՆԵԶՈՆ, երեկոյեան ժամը **7:30**-ին, «Սարգիս Զեյթեան» կեդրոնէն ներս:

• Հինգշաբթի, 17 Սեպտեմբեր 2026
ՀԱՄԱԶԱՅԻՆԻ «ՊԱՐՈՅՐ ՄԵԼԿ» ՄԱՆԱԾԻՂ՝ ԿԱՐԴԻՍ ԲԵՆՏԻՐԵԱՆԻ ԳԵՂԱՆԿԱՐԱԿԱՆ ՑՈՒԳԱՅԱՆԴԵՍ, երեկոյեան ժամը **7:00**-ին, «Գալուստ Կիլպէնկեան» սրահին մէջ:
ԱՅՆՃԱՐԻ ԲԱՆԱԹԱԴԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐ՝ ԵՐԳԻ ՓԱՌԱՏՈՆ, երեկոյեան ժամը **8:30**-էն սկսեալ, Դալար անկիւնէն ներս:

• Ուրբաթ, 18 Սեպտեմբեր 2026
Լ.Օ.Խ.Ի «ԱՂԹԱՄԱՐ» ՄԱՆԱԾԻՂ՝ ՏՈՂԱԿ ԵՐԵԿՈՅ, երեկոյեան ժամը **8:00**-էն սկսեալ, «Սարգիս Զեյթեան» կեդրոնի շրջափակէն ներս:

• Շաբաթ, 19 Սեպտեմբեր 2026
ՍՈՒՄԱԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 111-ԱՄԵԱԿ ԵՒ ԱՅՆՃԱՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 87-ԱՄԵԱԿ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ, երեկոյեան ժամը **8:30**-էն սկսեալ, Սուսալերան յուշարձան-համալիրի կողքին:
ՊԱՏԳԱՄԱՆՈՍ՝ ԸՆԿ. Ալպէր Պալապանեան
Հ.Յ.Դ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ
ԳԵՂԱՐՈՒԹԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ՝

• Կիրակի, 20 Սեպտեմբեր 2026
ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆԱՐՀ ՊԱՏԱՐԱԳ, ՀՈՐԵՅԱՆԳՍԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՍՈՒՄԱԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 18 ՆԱՅՏԱԿԱՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ, ՄԱՏԱՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՇԽՈՒՄ. ՀԱՆԴԻՍԱԴԵՏՈՒԹԵԱՐ՝ ԳԵՐԸ. ՏԵՐ ԸՆԴԷ ԱՐՁ. ՓԱՆՈՒՆԵԱՆԻ, ԱՌԱՋՆՈՐԴ ԼԻՔԱՆՆԻ ՀԱՅՈՑ, առաւօտեան ժամը 10:00-ին «Ս.Պօղոս» եկեղեցւոյ մէջ:

**Հ.Յ.Դ «Կարմիր Լեռ» կոմիտէի
Դաստիարակչական - Քարոզչական Ցանձնախումբ**

**Հնարահանողէ
GET YOUR COPY
BOOK
presentation**

1931-2021

**ԼԻՒՍԻ ԹԻԹԻԻՆԵԱՆԻ ՍԱՀՈՒԱՆ 5-ՐԴ ԱՄԵԱԿ
IN LOVING MEMORY OF LUCY**

ՀԻՆԱԳՇԱՔԹԻ,
17 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2026,
ԵՐԵԿՈՅԵԱՆ
ՍԱՍԸ 7:00

Լիւսի Թիւթին

ՎԱՐԴ՝
ՀԱՄԱԶԱՅԻՆԻ
«ԼԻՒՍԻ
ԹԻԹԻՆԵԱՆ»
ՑՈՒՑԱՄԱՐԴ

ԼԻՒՍԻ ԹԻԹԻՆԵԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒ
ՑՈՒՑԱՄԱՐԴՆԵՐ՝ 17 19 Սեպտեմբեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԾԱՊԷՍ ԵՏ Է, ԸՍՏ OECD-Ի PISA 2025 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾՐԱԳԻՐԻ ՊԼՇՏՈՆԱԿԱՆ ՏՈՒՆԵՐՆԵՐՈՒՄ



Սեպտեմբեր 8-ին հրապարակուած են OECD-ի PISA 2025 միջազգային կրթական գնահատման ծրագրի պաշտոնական տուեալները, որոնց մասին ահազանգեց ՀՀ-ի Բիւրոյի անդամ, Հայաստանի Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Լիլիթ Գալստեան՝ դիտել տալով, որ անոնք լիովին մերկացուցին, այսպէս կոչուած, կրթական բարեփոխումներու իրական երեւոյթները:

Ան կը նշէ, որ PISA-ն հանրակրթութեան ոլորտի ամենէն հեղինակաւոր միջազգային ծրագիրն է, կը ստուգէ 15 տարեկան աշակերտներու՝ ուսողութիւն, ընթերցանութիւն, բնագիտութիւն դասանիւթերէն ստացած գիտելիքները իրական կեանքի մէջ կիրարկելու կարողութիւնը: Այս ուսումնասիրութեան մասնակցած է 15-ամեայ աշակերտներուն մօտաւորապէս 80 առ հարիւրը:

Հրապարակուած տուեալներուն համաձայն, ընթերցանութիւն՝ Հայաստանի 15-ամեայ աշակերտներուն միայն 19 առ հարիւրը հասած է այն նուազագոյն մակարդակին, զոր PISA-ն անհրաժեշտ կը նկատէ որեւէ բնագիր հասկնալու, հիմնական միտքը զըտնելու եւ պարզ եզրակացութիւններ կատարելու համար:

Ուսողութեան պարագային, միայն 28 առ հարիւրը հասած է նուազագոյն պահանջուող մակարդակին՝ կարենալ կիրարկել հիմնական ուսողական գիտելիքները՝ պարզ հարցեր լուծելու: Նոյնն է պատկերը նաեւ բնագիտութեան ոլորտին՝ 26 առ հարիւր:

Փաստօրէն Հայաստանի կրթական համակարգի PISA արժեւորումը միջազգային չափանիշով շատ ցած արդիւնք արձանագրած է: Վրաստանը եւ Ազրբայժանը երեք հիմնական ոլորտներու մէջ առաջ անցած են Հայաստանէն: Հայաստանի կրթական համակարգի PISA չափումը շատ ցած արդիւնք արձանագրած է տարածաշրջանի բոլոր երկիրներու համեմատութեամբ, Ներառեալ՝ Թուրքիան: Հայաստան միայն իւրոյնքստանի նկատմամբ քիչ մը առաւելութիւն ունի:

Լիլիթ Գալստեան այս բոլորին լոյսին տակ կը գրէ. «Այս աղետալի պատկերը երկրում կրթական քաղաքականութեան անարդիւնատուութեան, իսկ աւելի ճիշդ՝ **Ֆիսացոյի** (կատարեալ ծախողութեան) մասին է: Սա խօսում է «կրթական բարեփոխումներով» հանրակրթութեան համակարգը շարունակ ցնցումների տանելու, ոլորտի կառավարման անարդիւնատուութեան, խորքային խնդիրներին համակարգային լուծումներ տալու անկարողութեան եւ, առհասարակ, երկրի համար խիստ ռազմավարական ուղղութեան տապալման մասին է»:

Ան դիտել տուաւ, որ «կրթական բարեփոխումներ» պիտակին տակ վերջին հինգ տարիներուն՝ 2021-2025, կրթութեան ֆինանսաւորումը մեծապէս աւելցած է, 2021-ի 149 միլիարդ դրամէն 2025-ին հասած է մինչեւ 300 միլիարդ:

«Այսպէս կոչուած, «կրթական բարեփոխումները» եղել են կառավարութեան եւ յատկապէս տուեալ գերատեսչութեան հիմնական խաղաթուղթը: Կրթական խոր չափորոշիչն էլ ներկայացուցէ է որպէս կրթական մրցակցային առաւելութիւն:

«Բազմաթիւ անգամներ եմ շեշտել, որ դպրոցաշինութիւնը/ինքնին՝ թերակատարուած են անորակ/դէտ կրթական որակ չէ, ինչպէս որակի չափանիշ չեն ծախողուած են ոչ բաւարար փորձարկում անցած, բայց պարտադրուող դասագրքերը, **մեխանիկական աստեստցիան** (մեքենական վկայագրումը), Նոյնքան արկածային ակադեմական քաղաքը... հանրակրթութեան կառավարման շարունակ փոփոխուող **մոտեցումները** են միմեանց յաջորդող իրական **ալքերն** (որոշումներն) ու չմարտուած օրէքների փոփոխութիւնները: Կրթական հաստատութեան ժապաւեն կտրելն էլ դեռ գիտելիք ու կառավարում չէ, ոչ էլ՝ մրցունակ կրթական քաղաքականութեան գրաւական:

Ոլորտի բազմաթիւ փորձագետների հարիւրաւոր առաջարկներ են լուծումներ մտնում են մերժուած՝ ձայն բարբառոյ յանապատի, որովհետեւ քաղաքական մեծամասնութեան խմբակից չեն, որովհետեւ քաղաքական մեծամասնութիւնն այլ առաջնահերթութիւններով է առաջնորդուում:

«Լոգումնակներով, անբովանդակ մեծախօսութեամբ, մակերեսային պատկերացումներով եւ այլա-կախումներով մերժող պահուածքով չի կտրելի ոլորտ կառավարել կամ քաղաքականութիւն մշակել. հենց այս մասին է արձանագրուած արդիւնքը: Կրթութեան ոլորտում ցնցումների, սիրողական եւ ամբոխահանող փորձարկումների կամ օտարածին օրակարգերի համար հանրութիւնն է վճարում եւ այն շատ թանկ գին ունի», դիտել կու տայ Լիլիթ Գալստեան:

«Ուր տարի շարունակ ռազմավարական կարելու-րազոյն ուղղութիւն հանդիսացող կրթութեան (եւ ոչ միայն) համակարգը արկածախնդրութեան տարած եւ, առհասարակ, հանրութեանը այս աղետալի փաստի առջեւ կանգնեցում կառավարիչները պատասխանատուութիւն պիտի կրեն սրա համար: Նաեւ՝ կրթութեան պիտեճի անարդիւնատեւ ծախսի համար», կը շեշտէ Լ. Գալստեան:

ՏԵՂԻ ՌԻՆԵՑԱՒ ՄԱՐԱԼ ԵՒ ԺԻՐԱՅԻ ՓԱՆՈՍԵԱՆՆԵՐՈՒ «ԵՐԱԶ, ԱՐՈՒԵՍ, ԵՐԵՒԱՆ» ԽՈՐԱԳԻՐՈՎ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ

Հինգշաբթի, 3 սեպտեմբերին, յետմիջօրէի ժամը 5:00-ին Երեւանի «Ժամանակակից արուեստի թանգարան»-ին մէջ տեղի ունեցաւ Լիբանանի մէջ գործող «ԱՅԲ թու ՉԵՏ» արուեստի ակադեմիայի հիմնադիրներ Մարալ եւ Ժիրայր Փանոսեաններու անհատական ցուցահանդէսի բացումը՝ «Երազ, արւեստ, Երեւան» խորագիրով:

Ցուցահանդէսի բացման երեկոյն համախմբեց արուեստագետներ, արուեստասէրներ եւ հիւրեր՝ ստեղծելով ջերմ ու հարազատ մթնոլորտ, որուն մէջ յատկանշական էր արւեստի ճամբով Հայաստանի եւ սփիւռքի կամրջումը: Մարալ եւ Ժիրայր Փանոսեանները հայաստանեան արուեստասէր հանրութեան ներկայացան 40 գեղանկարներով, որոնց 25-ը՝ Ժիրայր Փանոսեանի իւրաներկ եւ ջրաներկ գործերը, իսկ 15-ը՝ իւրաներկ, Մարալ Փանոսեանի վրձինն պատկանող:

Ժիրայր Փանոսեանի գործերուն մէջ կ'արտացոլան այն զգացումներուն, զորս ունեցած է վերջին շրջանի պատերազմին ստեղծած անորոշութենէն եւ ճնշիչ վիճակէն, ինչպէս նաեւ՝ բնութիւնը: Մարալ Փանոսեանի գործերը կը ցոլացնեն իր անհատական փորձառութիւնները՝ խանդավառութիւններ, յուսախաբուութիւններ, երազանքներ, ամէն տեսակի ներքին մարդկային ապրումներ, ծնողին կապուած յիշատակներ:

Ներկայացուած գործերուն 90 տոկոսը 2025-2026 տարեշրջաններու ստեղծագործութիւններ են:

Այս առիթով արտասանած իր խօսքին մէջ Մարալ Փանոսեան ուրախութիւն յայտնեց «Ժամանակակից արւեստի թանգարան»-ին հետ գործակցութեան իրելու արդիւնք Հայաստանի մէջ իրականացած այս ցուցահանդէսը:



սին համար՝ նշելով, թէ նման առիթ մը երազն է նաեւ իւրաքանչիւր սփիւռքահայ արուեստագետի:

Իր ներկայացուած գործերուն մասին խօսելով՝ Մ. Փանոսեան ըսաւ, որ հոն կան իր զգացական աշխարհին, նկարագրային գիծերուն արուեստի ճամբով դրսեւորումները՝ երբեմն հակասական, սակայն իրապաշտ:

Ժիրայր Փանոսեան նշեց, որ իր բնակարաններուն մէջ այս պարագային կանաչ գոյնը կը բացակայի, որովհետեւ վերջին շրջանին պատերազմներն ու արհաւիրքները այնքան ծանր եղան եւ ազդեցին մարդոց վրայ, որ բնութիւնը իր տեղը զիջեցաւ անօդաչու սարքերու, փուլ եկող շէնքերու, մարդկային սուր տագնապներու:

Բայց եւ այնպէս արուեստագետները նշեցին, որ միշտ ալ պէտք է փնտռել լոյսը, թէկուզ փորձառութիւններն ու կացութիւնը ըլլան ծանր, որովհետեւ երազը միշտ ալ կ'ապրի, ուստի պէտք է կառնիլ անոր:

ՇՆՈՐՀԱՅԱՆԴԵՍ՝ ԱՃԵՆ ԶԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ «ԲԵՆԱՌՈՒՊ» ԱՐՑԱՆԻ ԲԱՐԲԱՌՈՎ ՊԱՏՄՈՒԾԵՆԻ ԵՒ ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉԵԱՆԻ «ԲԱՐՅԱՆԳՈՒՄՏ» ԳԻՄՐԻԻ ԲԱՐԲԱՌՈՎ ՊԱՏՄՈՒԾԵՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Երեւանի մէջ «Թեքեան կեդրոն» հիմնադրամի դաշինքին մէջ տեղի ունեցաւ երկու գիրքի շնորհահանդէս: Առաջինը՝ Աշխէն Յարութիւնեանի «Զաթոխա» պատմուածքը, որ Շուշիի մասին է՝ գրուած Արցախի բարբառով: Իսկ երկրորդը Լիլիթ Մկրտչեանի «Զարիանգուստ» պատմուածքներու ժողովածուն է՝ գրուած Գիւմրիի մասին, Գիւմրիի բարբառով: Երկու գիրքերուն տպագրութիւնը իրականացուած է լոնտոնաբնակ բարերար, «Թեքեան կեդրոն» հիմնադրամի հոգաբարձու Բագրատ Նազարեանի եւ «Թեքեան կեդրոն» հիմնադրամի հովանաւորութեամբ:

Շնորհահանդէսին ներկայ գտնուեցան՝ Թեքեան մշակութային միութեան նախագահ Ռուբեն Միրզախանեանը, գիրքերու հեղինակները, գրողներ, գրականագետներ, մշակույթի գործիչներ, արցախցիներ, գիւմրեցիներ, հիւրեր:

Ներկաները ողջունեց «Թեքեան կեդրոն» հիմնադրամի տնօրէն Արմէն Շուկիկեանը: Ան ըսաւ, որ հայոց 2 քաղաքներուն մասին գիրքերուն մէջ նկարագրուած են՝ մեր աշխարհագրութիւնը, մեր պատմութիւնը, մեր անաւոյթները, անոնց բնակիչները: Բովանդակութենէն բացի՝ շեշտեց այն հանգամանքը, որ անոնք գրուած են բարբառներով: Ան նշեց. «Մենք օրինակ կը հանդիսանանք, որպէսզի ուրիշներուն ալ նպատեն եւ մեր բարբառներով, արեւմտահայերէնով աւելի շատ գրական գործեր ստեղծուին»:

Շնունդով գիւմրեցի գրականագետ, նկարիչ Լեւոն Լաճիկեան իր խօսքին մէջ առանձնացուց հանգամանք մը, որ հայոց 2 քաղաքները՝ Գիւմրիի եւ Շուշի, շատ նման են իրարու՝ մշակույթի զարգացման առումով: Երկու քաղաքներուն մէջ ալ շատոնց թատրոններ



գործած են, թերթեր տպագրուած, մշակույթի գործիչներ ծնած, երաժշտութիւն գրուած, արհեստներ զարգացած: Եւ այսօր նոյն քաղաքներուն մասին ներկայացուող գիրքերուն հեղինակները մէկը Շուշին, միւսը Գիւմրին են: «Նաեւ նման են այդ երկու քաղաքները ողբերգութեան առումով: 19 մարտ 1920-ին լոյս 20-ի գիշերը տեղի ունեցաւ Շուշիի հայութեան սպանդը: Ասել 16 տարի ետք Լեւիականի երկրաշարժն էր՝ ժամը...», աւելցուց Լ. Լաճիկեան: Խօսելով «Զարիանգուստ» գիրքի մասին՝ նշեց, որ անոր հերոսները գիւմրեցիներն են՝ իրենց իւրայատուկ կատակասիրութեամբ, **քոլորիտով**: «Գիւմրեցիի ապրելակերպը պարզ է, ան կրնայ ծիծաղիլ ցաւի մէջ, կատակել՝ կորուստի կողքին ու պահել արժանապատուութիւնը՝ Նոյնիսկ ամենաղծուար պահերուն», նշեց ան:

Շար.ը՝ էջ 6

«ԱՐՑԱՆԻ ՄԵՏԻԱՅԻ ԶԱՅՆԵՐԸ». ԿԱԽԵՐԱԳՐՈՒԱԾ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ՈՐ ԿԸ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԻ



Վերջերս Երեւանի Կինոտան մէջ կայացաւ Անի Մանկասարեանի հեղինակած «Արցախի մետախի ծայները» փաստաւաւերագրական ժապաւենի շնորհահանդէսը:

Ժապաւենը կը պատմէ Արցախի տեղեկատուական դաշտի պետական երեք լրատուամիջոցներու՝ «Ազատ Արցախ» թերթի, Արցախի հանրային ծայնասփիւռի եւ Արցախի հանրային հեռուստատեսութեան պատմութեան եւ գործունեութեան մասին, հակամարտութեան տարիներու ընթացքին:

Ժապաւենին ստեղծումը պարզապէս լրագրական կամ շարժապատկերային նախագիծ չէր, այլ այդ տարիներու ընթացքին հաւաքուած յիշողութիւններն ու արժեքաւոր արխիւային նիւթերը մէկտեղելու, Արցախի **մետախի** անցած ճանապարհը փաստագրելու եւ փոխանցելու աշխատանքն էր:



«Նպատակս էր ամբողջացնել այս **մետախներու** անցած ճանապարհը, հաւաքել արժեքաւոր նիւթեր, հանդիպումներ ունենալ **մետախ**-աշխատակիցներու հետ եւ արձանագրել անոնց խօսքը», շնորհահանդէսի ժամանակ նշեց ժապաւենին հեղինակը:

Շար.ը՝ էջ 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՊԱՐԱՆԻ ՄԵՋ ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒԱԾ Ե ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՐՅԻ



Հայաստանի Ազգային գրադարանի առաջին յարկին վրայ Նոր ընթերցարանի մը բացում է՝ նախատեսուած սահմանափակ կարողութիւններ ունեցող ընթերցողներու համար:

Ընթերցարանի ստեղծուած է ամերիկահայ գրադարանավար Ծիածան (Ջիա) Այվազեանի կտակին համաձայն՝ իբրեւ յատուկ նախագիծ Հայաստանի Ազգային գրադարանի ընթերցողներուն համար:

«Աշակից ընթերցարան» խորհրդանշական անունանումով այս միջավայրին մէջ իւրաքանչիւր ընթերցող կրնայ հաւասար հիմունքներով եւ իր կարիքներուն համապատասխան օգտուիլ գրադարանի աղբիւրներէն, կրթական եւ մշակութային կարելիութիւններէն: Ընթերցարանի համալրուած է ձայնագիրքերով, Պրայեան գրադարանի եւ այլընտրանքային հրատարակութիւններով, ինչպէս նաեւ՝ ժամանակակից արհեստագիտական լուծումներով: Ներդրուած միջոցներն ու արհեստագիտութիւնները կարելիութիւն կու տան գրականութիւնն ու տեղեկատուութիւնը ներկայացնելու տարբեր ձեւաչափերով՝ նպաստելով գրադարանային ծառայութիւններու առաւել յարմարաւետ, արդիւնատու եւ մատչելի կազմակերպման:

Ընթերցարանի բացման ներկայ գտնուեցան՝ Հայաստանի կրթութեան, գիտութեան, մշակույթի եւ մարմնակրթութեան նախարարի տեղակալ Ալֆրետ Զոհարեանը, Ազգային գրադարանի տնօրէն Աննա Չուլեանը, Ծիածան (Ջիա) Այվազեանի ընտանիքի անդամները՝ եղբայրը՝ Ադամ Այվազեանը, անոր կինը եւ թոռները, Ազգային գրադարանի ընթերցողները, աշխատակիցները, «Չինուորի տուն» վերականգնողական կեդրոնի եւ Սոկրատ Շահնազարեանի անուան մշակույթի տան ներկայացուցիչները:

Շար.ը՝ էջ 6

Պատրաստեց՝ ՄԱՐԻՆԱ ՀԱՄԱՄԵԱՆ

ՔԵՍԱՊԻ ԳԻՒՂԵՐԸ՝ ԿԻԼԻԿԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐԱՊՐՈՂ ՎԿԱՆԵՐԸ

ՎԵՐԱՊՐԱՏՈՒԵԼԻ ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԵԱՍԵԱՆ ՔԵՍԱՊԻ ՄԷՋ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԲԱՑՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑ-ՄԻԱՑԵԱԼ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԸ

Քեսապցի երիտասարդներ տարագրություն են առաջ աշխատելու կ'երթային դեպի Մերսին, Այաս, Փայաս եւ մինչեւ Ատանայի կողմերը։ Անոնք գլխավորաբար իբրեւ բեռնակիր կ'աշխատեին որոշ ժամանակ եւ յետոյ գիւղ կը վերադառնային։ Քեսապցի կարգ մը ընտանիքներ ալ մնայուն բնակություն հիմեր դրած էին Ալեքսանտրեթի մէջ։ Ալեքսանտրեթի մէջ մեծ թիւով քեսապցիներ բնակութիւն հաստատեցին տարագրութենէ ետք։

Քեսապէն դեպի մօտակայ քաղաքներ՝ Անտիոք եւ Լաթաքիա երթեւեկը հետիոտն կամ ջորիներով կը կատարուէր։ Անտիոքէն Լաթաքիա խճուղին բացուեցաւ 1928-ին։ Այդ խճուղին կ'անցնէր Քեսապէն արեւելք գտնուող թրքաբնակ Օրտու անունէ։ Քեսապցիք իրենց միջոցներով եւ աշխատանքով շինեցին Օրտուն Եսկիւրան եւ հոնկէ Քեսապ անոնք երկարող խճուղին։ Այնուհետեւ առաջին ինքնաշարժը մտաւ Քեսապ։

Քեսապէն դեպի Պէյրութ արտագաղթը 1920-1930-ական տարիներուն լայն ծաւալ ստացաւ։ Պէյրութ հաստատուողները, յատկապէս սկզբնական շրջաններուն, մեծ մասամբ Չէյթունլիէ թաղին մէջ կը բնակէին, գլխաւորաբար սրճարաններու եւ ճաշարաններու իբրեւ սպասեակ կը ծառայէին, իսկ առջիկները տուներու մէջ սպասուի կ'ըլլային։



Վերապատուելի Տիգրան Մնդրեասեան

սապի Աւետարանական եկեղեցւոյ հովուութիւնը։ Վերապատուելի Տիգրան Մնդրեասեան վերակազմեց համայնքը եւ վերաբացաւ տարագրութեան օրերէն փակւած դպրոցը։ Ի յիշատակ 1909-ի կոտորածի եւ 1915-ի տարագրութեան զոհերուն, դպրոցը 1924-ին վերանուանուեցաւ Յայ Աւետարանական Նահատակաց վարժարան։ Երկսեռ եւ Նախակրթարանի ծրագիրով գործող դպրոցին տնօրէն Նշանակուեցաւ Տիգրան Խորիքեան։

Վերապատուելի Մնդրեասեան 1927-ին կորսնցուց կինը։ Մէկ տարի ետք ամուսնացաւ Չարուի Տետեանի հետ։ 1929-ին ան Քեսապէն Պիթիաս տեղափոխուեցաւ։

Ուսումնասիրաց ընկերութեան Կեդրոնական վարչութիւնը 1931-ի կրթական տարեշրջանի վերամուտին, Նկատի ունենալով որ մինչեւ այդ ժամանակ դպրոցը աւարտած աշակերտները տարագրութիւնը վերապրած պատանիներ էին, իսկ յետեղեռնեան շրջանին ծնած Նոր սերունդի տղաքն ու առջիկները երկրորդական վարժարան մուտքի անհրաժեշտ տարիքը եւ ուսումը չունէին, որոշեց մէկ տարիով առկախել դասաւանդութիւնները։ Այսպիսով Ուսումնասիրաց երկրորդական Բարձրագոյն վարժարանը 1931-1932 կրթական տարեշրջանին

փակուեցաւ աշակերտի չգոյութեան պատճառով։ Մինչեւ այդ ժամանակ, 1924-1931 տարիներուն Ուսումնասիրաց երկրորդական Բարձրագոյն վարժարան յաճախած էին յիսունհինգ աշակերտներ, որոնց կեսէն անելին աւարտած էին դպրոցին քառամեայ ընթացքը։ Աւարտականները, համետ վարձատրութեամբ, իբրեւ ուսուցիչ ծառայեցին Քեսապի եւ գիւղերուն, ինչպէս նաեւ Լաթաքիոյ, Յալապի, Դամասկոսի, Տէր Չօրի, Տերպսիի, Ռաս Էլ Այնի, Գամիշլիի, Տերիքի, Արաբ Փունարի, Ճարապլուսի, Թէլ Ապիսի, Այն Տուարի, Արֆալուի եւ Դնեմիի հայկական դպրոցներուն մէջ։

Ուսումնասիրաց վարժարանի հոգաբարձութիւնը դասաւանդութիւններու առկախումբն ետք ժողով գումարեց եւ բոլոր հանգամանքները Նկատի ունենալով եզրակացուց։

Ուսումնասիրաց երկրորդական վարժարանը 1932-ի աշնան վերաբացուեցաւ տասներեք աշակերտներով, որոնք յարանուական Նախակրթարաններէ շրջանաւարտներ էին։ Յակոբ Աթիկեանի տնօրէնութեամբ, ուսուցչական պաշտօնի կոչուեցաւ ֆրանսական համալսարաններէ շրջանաւարտ Ասատուր Գալայճեան-Սեֆերեան, Սողոմոն Յով-

սեփեան, Վահան Չիրիքեան, Գեորգ Գրըգեան, Տարսունի Ամերիկեան քոլէճէն շրջանաւարտ Խաչիկ Գարուկեան, ինչպէս նաեւ վաստակաշատ կրթական մշակներ Տիգրան Պողիկեան, Ժոզէֆ Ինճեմիկեան եւ արաբերէնի ուսուցիչ Նիքոլա Մախոտ։

Ուսումնասիրաց վարժարանի ուսումնական խորհուրդը, Նկատի ունենալով որ յարանուական Նախակրթարաններէ շրջանաւարտները, որոնք պիտի գային իրենց ուսումը շարունակելու Ուսումնասիրաց երկրորդական վարժարան, միեւնոյն կրթական պատրաստութիւնը չունէին, որոշեց սեփական Նախակրթարանը հիմնել։

Այսպիսով, 1933-ի կրթական տարեշրջանի վերամուտին Ուսումնասիրաց-Միացեալ Նախակրթարանը բացուեցաւ Քեսապի հրապարակին վրայ գտնուող աւետարանական համայնքին պատկանող շէնքին մէջ։

Նախակրթարանի հիմնադրութեան մէջ կարեւոր դեր ունեցան ուսուցիչներ Տիգրան Պողիկեան եւ Ժոզէֆ Ինճեմիկեան։

Ուսումնասիրաց-Միացեալ Նախակրթարանը 1934-ի վերամուտին ժողովրդային գրադարանի շէնքը փոխադրուեցաւ։ Ուսուցիչներ եղան Ժոզէֆ Ինճեմիկեան, Տիգրան Պողիկեան, Յակոբ Գալայճեան, Յակոբ Քիթապլըգեան, Դամբարձում Թիթիգեան, Յովհաննէս Թիթիգեան, Ժոզէֆ Պասմաճեան, Սառա Չիրիքեան-Յովսէփեան եւ Արաքսի Սողոմոնեան։

Վերապատուելի Տիգրան Մնդրեասեանի Քեսապէն մեկնումէն ետք, 1930-էն 1932՝ վերապատուելի Եղիա Զատունի,



Գալատուրանի հայ աւետարանական եկեղեցին

Նոյն ժամանակաշրջանին քեսապցի կարգ մը ընտանիքներ ալ Յալապ, Լաթաքիա եւ Դամասկոս փոխադրուեցան։

Վերապատուելի Տիգրան Մնդրեասեան ծնած է 1888-ին, Մուսա Լերան Եղուն Օլուք գիւղը։ 1902-ին Այնթապի Կեդրոնական Թուրքիոյ քոլէճը մտաւ։ Քեսապ գալով, 1906-1907 տարիներուն իբրեւ ուսուցիչ ծառայեց Էքիզօլուի եւ Զեյթինայի մէջ, իսկ կիրակի առաւօտները եկեղեցական պաշտամունքին քարոզիչի պաշտօն ստանձնեց։ 1908-1909 տարիներուն իբրեւ ուսուցիչ եւ քարոզիչ պաշտօնավարեց Պէյլանի մօտակայ Ֆարթսլը գիւղին մէջ։ 1909-ի կոտորածի օրերուն մազապուրծ ազատեցաւ։ Այնթապի Կեդրոնական Թուրքիոյ քոլէճէն շրջանաւարտ եղաւ 1911-ին։ Այնուհետեւ Մարաշի Աստուածաբանական ճեմարանը մտաւ, զոր աւարտեց 1914-ին։ Նոյն տարին ամուսնացաւ Արաքսի Մնջեր-



Ուսումնասիրաց երկրորդական վարժարանի ուսանողական միութեան անդամներ



Քեսապի Յայ Աւետարանական Նահատակաց վարժարանը

իսկ 1932-էն 1935՝ վերապատուելի Յակոբ Շնորհոքեան աւետարանական համայնքի հովիւներ եղան։

Այս ժամանակ Քեսապի աւետարանական համայնքին մէջ ծայր առաւ ազգայնական շարժումը։ Ներքին համայնքային երկփեղկումը հետզհետէ ծաւալեցաւ։ Ազգայնական շարժման հետեւորդները, Ուսումնասիրացին հետ գործակցելով, կ'աշխատէին եկեղեցին եւ դպրոցը իրենց հակակշիռին տակ առնել։ Եկեղեցւոյ եւ դպրոցի վարչութիւններուն միջեւ հարցեր ստեղծուեցան։ Դպրոցի վարչութիւնը ազգայնականներուն ձեռքն էր եւ կը ջանար Ուսումնասիրացի կըրթական ծրագիրին համապատասխան պատրաստել իր շնորջանաւարտները, իսկ եկեղեցւոյ վարչութիւնը կ'ընդդիմաւար Ուսումնասիրացի հետ գործակցութեան։

Յաջորդող տարիներուն համայնքի ազգայնական շարժման հետեւորդները վերադարձան մայր եկեղեցի։

Վերապատուելի Տիգրան Մնդրեասեան վեց տարի ետք, 1935-ին կրկին Քեսապ գալով վերստանձնեց համայնքին հովուութիւնը։ Երեք տարի ետք, 1938-ին ան Լաթաքիա տեղափոխուեցաւ։ 1942-ին Յալապ փոխադրուեցաւ, ուր Տաւուիթ թաղի Նորաշէն աւետարանական եկեղեցւոյ, իսկ 1949-ին Բեթել Յայ Աւետարանական եկեղեցւոյ հովիւը եղաւ։ 1957-ին Պէյրութ փոխադրուեցաւ, ուր մահացաւ 1962-ին։

Քեսապի հայ կաթողիկէ համայնքի Անարատ յղութեան Նուիրած Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին կառուցւած էր Անտոնեան միաբանութեան կողմէ։ Դետագային շմարանեան վարդապետներ ստանձնած էին համայնքին ժողովրդապետութիւնը։

Տարագրութենէ վերադարձան ետք, 1922-ին հայր Յովհաննէս Զիլէճեան ստանձնեց համայնքին ժողովրդապետութիւնը։ Յաջորդող տարի, 1923-ին գային փոխարինեց հայր Գեորգ Ագրապեան, որ ծառայեց մինչեւ 1934։ Այնուհետեւ ժողովրդապետ եղաւ հայր Յովհաննէս Եմբեճեան։

ՇՆՈՐՀԱՅԱՆԴԵՍ՝ ԱՃԻԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ...

Շարունակում 4-րդ էջին

Արցախի Հանրապետության կրթության, գիտու-թեան, մարմնակրթության նախկին նախարար, այժմ Երեւանի Յովհաննէս Թումանեանի թանգարա-նի տնօրէն Լուսինէ Ղարախանեան, խօսելով Ա. Յա-րութեանի «Զշաթոխպ» գիրքի եւ անոր գլխաւոր հեղրոսի՝ Ամոսիկի մասին՝ նշեց, որ իսկական արցախ-ցի է Ամոսիկը։ «Արցախեան բարբառը գիրքի բովան-դակութիւնը, վաւերականութիւնը դարձուցած է շատ յուզիչ եւ շատ հարազատ»։ «Այսօր կը փորձեն մոռա-ցութեան ալիքի ծածկել այն ամէնը, ինչ մենք ունե-ցած ենք Արցախ աշխարհին մէջ. մեր յիշողութիւննե-րը։ Մոռացութեան ալիքի մատնել մեր ողբերգութիւ-նը, որ տեսակ մը հինցած կը թուի յատկապէս օտար-ներուն համար։ Արմինէ Յարութիւնեանի «Զշա-թոխպ» գիրքին ծնունդը յիշողութեան վերականգ-նում է, դիմադրութիւնն է այդ մոռացութեան ալի-քին», իր խօսքին մէջ շեշտեց բանաստեղծ, արձա-կագիր, Համազգային հայ կրթական եւ մշակութային միութեան Արցախի գրասենեակի տնօրէն Յերմինէ Աւագեանը։ Գիրքերու տպագրութեան հովանաւոր Բագրատ Նազարեան նոյնպէս շեշտեց այն, որ անոնք գրուած են բարբառներով, որոնք ալ զինք ա-ւելի կ'ոգէւորեն։ Ա. Յարութիւնեան ըսաւ՝ ունի նաեւ այլ ստեղծագործութիւններ, որոնք հիմնականօրէն պատերազմի մասին են եւ գրական հայերենով գըր-

ւած են։ «Շատ ուրախացայ, որ պարոն Նազարեանը առաջարկեց այս գիրքը տպագրել, որովհետեւ այն արցախեան բարբառով է եւ թիրախային։ Գիտեմ, որ շատերը թերեւս չհասկնան բարբառով գրութիւնը, իսկ այս կը նշանակէ, որ մեր մէջ դեռ ինչ-որ բան էն չէ, եւ ինչ-որ բան պէտք է փոխել։ Յուսամ՝ կու գայ այն ժամանակը, որ կը հասկնանք մեր բոլոր բար-բառները», նշեց հեղինակը։

Շնորհահանդէսէն ետք հեղինակները իրենց ստո-րագրութեամբ գիրքերը նուիրեցին ներկաներուն, այդ շարքին՝ «Գուրգէն Մելիքեանի՝ Զաշաթաղի բազ-մազաւակ ընտանիքներուն հիմնադրամ»-ի (ԳՄԶ-ԲԸՀ) գործադիր տնօրէն Գուրգէն Մելիքեանին, որ տարիներու ընթացքին մեծ աջակցութիւն ցուցաբե-րած է արցախցիներուն եւ ցարդ կը շարունակէ ցու-ցաբերել։

Գիրքերու շնորհահանդէսին զուգահեռ՝ «Թէքե-եան» կեդրոնի ցուցասրահին մէջ բացումը կատար-ւած էր Հաղորդի մանկապատանեկան ստեղծագոր-ծութիւններու կեդրոնի ասնէրու եւ աշխատակիցնե-րու ձեռքի աշխատանքներուն, նկարներուն ցուցա-հանդէս-վաճառքին։ Կեդրոնի տնօրէն Իրա Թամրազ-եան ներկայացուց ցուցադրուած նմուշները եւ անդ-րադարձաւ կատարուած աշխատանքներուն։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ՄԵՋ ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒՄԸ Է...

Շարունակում 4-րդ էջին

«Հայաստանի կառավարութիւնը սահմանափակ կարողութիւններով մարդոց համար կարելիութիւն-ներ ստեղծելը կարեւոր առաջնահերթութիւն կը հա-մար։ Անոր նպատակն է, որ քաղաքացիները ունե-նան հաւասար կարելիութիւններ՝ օգտուելու բոլոր ենթակառուցուածքներէն», բացման խօսքին մէջ ըսած է կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմ-նակրթութեան նախարարի տեղակալ Ալֆրետ Զոչա-րեանը՝ ներկայացնելով Նախաձեռնութիւնը։

Անդրադառնալով Ազգային գրադարանին մէջ բո-վանդակային եւ ենթակառուցուածքային բարեփո-խումներուն՝ ան նշած է, որ այդ ուղղութեամբ պե-տութիւնը հետեւողական ջանքեր կը գործադրէ, միաժամանակ կարեւոր կը համարուի բարերարնե-րու հետ համագործակցութիւնը՝ քաղաքացիները պետութեան կողքին եւ պետութիւնը՝ քաղաքացինե-րուն՝ սկզբունքով։

«Յուզիչ է, երբ մարդը կ'ապրի իր միջոցները այլ մարդոց բարօրութեան ուղղելու բարձր գաղափա-րով։ Առանձնայատուկ շնորհակալութիւն կը յայտնեմ Այվազեան ընտանիքին Շիածան (Ձիա) Այվազեանի կամքն ու Նախաձեռնութիւնը կեանքի կոչելու հա-մար», յայտնած է Նախարարին տեղակալը։

Հայաստանի Ազգային գրադարանի տնօրէն Ան-նա Չուլեան շնորհակալութիւն յայտնած է Նախա-ձեռնութեան մասնակից բոլոր կողմերուն՝ յաջողած համագործակցութեան համար։ Ան նշած է, որ գրա-

դարանները՝ իբրեւ մարդակեդրոն հիմնարկներ, աշ-խարհին մէջ երեւի թէ միակը մնացած են, որոնք անվճար են եւ հասանելի հասարակութիւններու հա-մար՝ պահպանելով գրադարանային փիլիսոփայու-թիւնը։ «Գրադարանէն օգտուելու հասանելիութիւնը սահմանափակ կարողութիւններով անձանց համար աւելի քան առաջնային է», նշած է Աննա Չուլեան՝ երախտագիտութիւն յայտնելով բարերար Շիածան (Ձիա) Այվազեանին եւ անոր ընտանիքին։

Շիածան (Ձիա) Այվազեանի ընտանիքին անդամ-ները եւս հանդէս եկած են խօսքերով։ «Այս Նախա-ձեռնութեամբ Շիածան (Ձիա) Այվազեանը պարզա-պէս յիշողութիւն չէ. ան կենդանի է՝ իբրեւ հոգիի շքե-րութիւն, որ օրինակելի պիտի ըլլայ սերունդներու համար», նշած է եղբօր թոռը՝ Նեթան Գրիգորի Այվա-զեանը։

Ներկայացուած է նաեւ Շիածան (Ձիա) Այվազեա-նի գործունեութիւնը։ Ան Նախապէս շուրջ 11 հազար կտոր գրականութիւն նուիրած է գրադարանին։ Հայ գրադարանավարներու հետ ունեցած սերտ համա-գործակցութեան եւ գրադարանային գործի զար-գացման մէջ ունեցած նշանակալի աւանդին համար 1991 թուականին Հայաստանի Ազգային գրադարա-նին կողմէ պարգեւատրուած է «Յակոբ Մեղա-պարտ» յուշամետալով՝ իբրեւ անոր գործունեու-թեան ամենէն բարձր գնահատական Հայաստանի մէջ։

«ԱՐՅԱՆԻ ՄԵՏԻԱՅԻ ԶԱՅՆԵՐԸ»...

Շարունակում 4-րդ էջին

Արցախի մէջ գործած են բազմաթիւ այլ լրատուամիջոցներ՝ շրջանային ու մայրաքաղաքային թերթեր, գեղար-ւեստական մամուլ, թուային հարթակ-ներ, որոնք մեծ աշխատանք տարած են։ Սակայն ժապաւենին մէջ ընտըր-ւած երեք կառոյցները առանցքային եղած են ո'չ միայն իբրեւ տեղեկատ-ւութեան աղբիւրներ, այլեւ՝ իբրեւ հա-սարակութիւնը միաւորող եւ պետա-կանութիւնը համակարգող կարեւոր խորհրդանիշներ։

Ժապաւենի ստեղծման ընթացքին հեղինակն ու ստեղծագործական խումբը հաւաքած են մեծածաւալ առ-խիւային նիւթեր եւ զրուցած՝ Արցախի **մետիայի** տարբեր տարիներու աշխա-տակիցներու հետ։ Այս աշխատանքը յատկապէս արժեքաւոր է այսօր, երբ այդ պատմութեան մեծ մասը մեզի կը հասնի արդէն կորսուած հայրենիքի յիշողութեան եւ վկայութիւններու մի-ջոցով։

Ժապաւենը թարգմանուած է նաեւ անգլերէնի, որ կարելիութիւն կ'ընձեռե՝ զայն ներկայացնելու միջազգային հարթակներու մէջ եւ Արցախի **մետիա-յի** պատմութիւնը հասանելի դարձնե-լու աւելի լայն լսարանի։

Հաղորդեց, որ շնորհահանդէսը կազմակերպուեցաւ «**ԴԻՍԼՈՒԳ**» հասա-րակական կազմակերպութեան կողմէ։ Արցախի մետիայի պատմութիւնը տե-ղահանութեամբ չէ աւարտած։ Արցա-խի հանրային հեռուստատեսութիւնը այսօր ալ կը շարունակէ իր գործու-նեութիւնը Հայաստանի մէջ՝ սուղ պայ-մաններով եւ փոքրաթիւ խումբով։ Ծա-րունակուող աշխատանքը լաւագոյն վկայութիւնը կը հանդիսանայ, որ Ար-ցախի մասին պատմելու, յիշողութիւնը պահպանելու եւ տեղի ունեցածը փաա-տագրելու առաքելութիւնը կը շարու-նակուի։

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՆՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՅՈՅ...

Շարունակում 3-րդ էջին

որոնք երիտասարդներուն թոյլ պիտի տան՝ ներգրաւուիլ համահայկական Նա-խաձեռնութիւններու մէջ, զարգացնել առաջնորդական կարողութիւններ եւ մասնակցիլ որոշումներու կայացման գործընթացներուն։ Հայկական ինքնու-թեան պահպանումը եւ համահայկական համագործակցութեան ապագան մեծա-պէս կախեալ պիտի ըլլան երիտասարդ սերունդներու ներգրաւուածութենէն։

Եզրակացութիւն եւ առաջարկուած ուղղութիւններ

Ըննարկումներու ընթացքին հնչած գաղափարներուն եւ մասնակիցներու արձագանգներուն հիման վրայ կարելի է արձանագրել, որ հայկական ինքնութե-ան պահպանման հարցը կը շարունակէ մնալ համահայկական առաջնահերթու-թիւն։ Սակայն Հայաստանի իշխանու-թիւններու կողմէ առաջ տարուած քա-ղաքականութիւնը կը միտի վերածե-ւել հայկական ինքնութիւնը՝ հակադրելով «իրական» եւ պատմական Հայաստա-նը, ինչ որ խոր ճեղք կը յառաջացնէ ազ-գային գիտակցութեան մէջ։ Այս գործըն-թացը կ'արտայայտուի կրթական, պատմական եւ խորհրդանշային փոփո-խութիւններով (Արցախի եւ Ցեղասպա-նութեան նսեմացում, տեղանուներու թոքացում եւ այլն) եւ կ'ուղեկցուի հայրե-նասիրութեան թուլացմամբ։ Միեւնոյն ժամանակ Եկեղեցւոյ դեմ յարձակումնե-րը եւ այս փոփոխութիւնները կը դիտ-ւին որպէս գիշումներ Թուրքիոյ եւ Ազըր-պեյճանի ճնշումներուն։ Արդիւնք՝ կը խո-րանայ Հայաստանի եւ սփիւռքի միջեւ բաժանումը, եւ կը վտանգուի հաւաքա-կան յիշողութեան ու ազգային ինքնու-թեան պահպանութիւնը։

Միաժամանակ, ըննարկումները ցոյց տուին, որ անհրաժեշտ է անցնիլ աւելի գործնական մօտեցումներու։ Մասնա-կիցները բազմիցս ընդգծեցին, որ ազ-գային նպատակներու շուրջ միաւորումը

Շնորհահանդէսին ներկայ գտնուե-ցան՝ արցախցի լրագրողներ, լրատ-ւական աշխատակիցներ, մշակոյթի գործիչներ, գրողներ։

Ժապաւենին հեղինակային խումբի աշխատանքը բարձր գնահատեց Նաեւ Մերգել Շահվերդեանը։ Ան արցախեան առաջին պատերազմի ժամանակ կը լուսաբանէր պատերազմական գործո-ղութիւնները՝ զանոնք հասանելի դարձնելով արտասահմանեան մամու-լին։

«Ժապաւենին մէջ մենք տեսանք Ար-ցախի **մետիայի ամփոփ** նկարագիրը տարիներու ընթացքին։ Համոզուած եմ, որ շուտով լոյս պիտի տեսնէ Նաեւ ժապաւեններ՝ Ստեփանակերտի թատ-րոնի, Արցախի մշակութային ծառան-գութեան մասին, որ շատ կարեւոր կը համարեմ», նշեց ան։

«Արցախի **մետիայի** ծայները» Անի Մանկատանեանի եւ ստեղծագործա-կան խումբի մեծ ու հետեւողական աշ-խատանքին արդիւնքն է։ Ժապաւենին մէջ հաւաքուած արխիւը, մարդոց յիշո-ղութիւնները եւ վկայութիւնները կա-րեւոր փաստագրական արժեք ունին եւ կրնան հիմք դառնալ Արցախի **մե-տիայի** պատմութեան հետագայ ու-սումնասիրութիւններուն համար։

Անիին կատարած աշխատանքի կարեւորութիւնը այսօր յատկապէս մեծ է. երբ հայրենիքի մէջ այլեւս կարե-լի չէ շարունակել այդ պատմութիւնը նոյն պայմաններուն մէջ, նոյնանման Նախաձեռնութիւնները կ'օգնեն պահ-պանել այն, ինչ այլապէս կրնար կոր-սուիլ ժամանակի ընթացքին։

«Արցախի մետիայի ծայները» ո'չ միայն անցեալի մասին ժապաւեն է, այլեւ յիշողութիւնը պահպանելու, ծայ-ները չլռեցնելու, պատմութիւնը շարու-նակելու փորձ է։

պէտք է ուղեկցուի յստակ գործողութիւն-ներով, համակարգուած աշխատանքով եւ շարունակական համագործակցու-թեամբ։

Այս ուղղութեամբ յատկապէս կարե-ւոր կը նկատուին հետեւեալ առաջնա-հերթութիւնները.

- Հայաստան-սփիւռք կապերու աւելի սերտացում եւ հաստատութեական համագործակցութեան զարգացում,

- Երիտասարդներու աւելի լայն ներ-գրաւում ազգային եւ համահայկական գործընթացներուն մէջ,

- Համահայկական գիտելիքներու, փորձառութիւններու եւ մասնագիտա-կան ներուժի փոխանակման հարթակ-ներու ստեղծում,

- Հայ համայնքներուն միջեւ աւելի համակարգուած եւ հետեւողական հա-մագործակցութեան զարգացում,

- Ազգային ինքնութեան՝ լեզուի, մշա-կոյթի եւ քրիստոնեական արժեքներու պահպանման եւ փոխանցման արդիա-կան մօտեցումներու մշակում,

- Եկեղեցական, կրթական եւ հա-մայնքային կառոյցներու միջեւ աւելի սերտ գործընկերութեան ձեւաւորում։

Վերջապէս, կլոր սեղանի ընդհանուր պատգամը այն էր, որ հայ ժողովուրդին առջեւ ծառացած մարտահրաւերները կարելի է յաղթահարել միայն համախմբ-ւած, կազմակերպուած եւ համագոր-ծակցող համաշխարհային հայութեան միջոցով։ Հայկական ինքնութիւնը, ազ-գային արժեքները եւ Հայ եկեղեցին կը շարունակեն մնալ այդ հաւաքական ու-ժի հիմքերը, սակայն ապագայի յաջո-ղութիւնը կախուած պիտի ըլլայ մեր կա-րողութենէն՝ այդ հիմքերուն վրայ կառու-ցելու նոր համագործակցութիւն, նոր Նախաձեռնութիւններ եւ նոր տեսլա-կան, որոնք պիտի ծառայեն հայ ժողո-վուրդի երկարաժամկետ զարգացման եւ կենսունակութեան։

ՕՐԱՏԵՏՐ

16 ՍԵՊՏԵՄԲԵՐ

- 1715.- Յովհաննէս Կոլոյտ Պոլսոյ պատրիարք կ'ընտրուի։ Ծնած էր 1678-ին, Բաղէշի հողոց գիւղը։ Եղաւ արեւմտահայ վերածնունդի ռահվիրանե-րէն եւ եկեղեցաշէն բեղուն գործունեութիւն ծաւալեց։ Վախճանեցաւ 1741-ին, Պոլիս։
- 1822.- Ծնունդ բժիշկ եւ վիպագիր Ծերենցի (Յովսէփ Շիշմանեան), Պոլսոյ մէջ։ Մահացաւ 1888-ին, Թիֆլիս։
- 1931.- Ծնունդ արծակագիր, թատերագիր եւ երգիծաբան Արտաշէս Զալան-թաբեանի, Երեւանի մէջ։ Մահացաւ 1991-ին, Երեւան։
- 1963.- Ծնունդ Արցախեան ազատամարտի մասնակից Ալպերթ Ավվերդեա-նի, Դաշկէտանի շրջանի Փիփ գիւղը։ Շուշիի առանձնակի գումարտա-կի կազմէն ներս մասնակցեցաւ Երասխի, Վարդենիսի, Նոյեմբերեա-նի, Շահումեանի, Ասկերանի, Մարտակերտի, Շուշիի եւ Հաղորութի շրջաններու ինքնապաշտպանական եւ ազատագրական մարտե-րուն։ Նահատակուեցաւ 1994-ին, Կարախանբէյլի գիւղի մարտերուն ժամանակ։
- 1992.- Մահ Արցախեան ազատամարտի մասնակից Ռոպերթ Աբրահամեա-նի, Ստեփանակերտի մէջ, ինքնաշարժի արկածի հետեւանքով։ Ծնած էր 1961-ին, Ստեփանակերտ։

Դ. ՂԱՍԱԿԱՐԳԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՀՄԸՄ ՊԵՅՐՈՒԹ ԿԸ ՍՈՒՐԱՅ
ԴԷՊԻ Գ. ԴԱՍԱԿԱՐԳ

ՀՄԸՄ Պեյրուբի ֆուտբոլի տղոց խումբը երեկ Պիամտունի դաշտին վրայ 7-1 արդիւնքով բաւական հանգիստ յաղթանակ արձանագրեց Պեքայի ախոյեան Նասր Զամետ Լոզի դէմ եւ այժմ 1 կետի պէտք ունի իր մնացեալ 2 մրցումներէն բարձրանալու Գ. դասակարգ:



Մրցումը սկսաւ ինչպէս ամեն անգամ զգուշ, եւ ՀՄԸՄ առիթ տուաւ իր մրցակիցին, որ փոխանցումներ կատարե՝ անոր վրայ ճնշելու եւ գնդակը անակնկալ ձեւով խլելու համար:

Այս անգամ ալ այդ խաղաոճը յաջողեցաւ, եւ հակայարձակումի մը վրայ Հայտար Հայտար 33-րդ վայրկեանին բացաւ մրցումին հաշիւը հազիւ 8 վայրկեաններ անց եւ խմբապետ Աւագ Պալապանեանի գեղեցիկ փոխանցումէն ետք:

Մուսա Ամին Նշանակեց երկրորդ կողմ: Կիսախաղի տուլիջէն առաջ, ՀՄԸՄ անակնկալ կ'ու մը ստացաւ, բայց անմիջապէս Հայտար փոխադարձեց՝ Նշանակելով անեցուած 4-րդ վայրկեանին:

Կը կարծուէր, որ ՀՄԸՄ-ի տղաքը աւելի պիտի դանդաղեցնէ խաղը եւ պահեստի մարզիկներուն հետ ապահով աւարտեն մրցումը: Ամին իր երկրորդ կողմ Նշանակեց ՀՄԸՄ-ի 4-րդը՝ 55-րդ վայրկեանին, որմէ ետք փոխարինող մարզիկները ներկայացան դաշտ, բայց արդիւնքին կամ մրցումին ընթացքին վրայ բան չփոխուեցաւ: Հայտար (65-րդ), Ճո Հայշեմ (85-րդ) եւ Ալի Իպրահիմ մրցումի միկնէ վերջին վայրկեանը ներկաները ուրախացուցին 7 գեղեցիկ կոլեր հրամցնելով:

ՀՄԸՄ-ի տղաքը տակաւին շատ աւելի լաւ կրնան խաղալ, բայց արդէն պահանջուած արդիւնքը եւ գործը կը կատարեն:

3 մրցումներէ ետք 9 ամբողջական կէտերը շատ լաւ են մեր տղոց համար: Կը կարծուէր, որ հիւսիսի ախոյեան Արապի Աքքար մեր դէմ սուր պայքար պիտի տաներ, բայց երէկ անոնք պարտութիւն կրեցին Ղատիր Հարիսէն՝ 2-1 արդիւնքով:

ՀՄԸՄ-ի յաջորդ մրցակիցը պիտի ըլլայ 4 կէտեր ունեցող հիւսիսի փոխախոյեան Սաքաֆի Հերին, որ կիրակի օր 2-2 արդիւնքով հաւասարութիւն արձանագրած էր Սաֆա Շուէֆաթի հետ:

Մրցումը տեղի պիտի ունենայ Սեւաթայի դաշտին վրայ:

Ստորեւ դասաւորումը՝ 3 հանգրուաններէ ետք.

1.- ՀՄԸՄ Պեյրուբ	ԿԵՏ
2.- Ղատիր Հարիս	9 (12-1)
3.- Արապի Աքքար	6 (4-5)
4.- Սաքաֆի Հերի	4 (5-5)
5.- Սաֆա Շուէֆաթ	4 (5-5)
6.- Նասր Զամետ Լոզ	2 (4-6)
	0 (3-11)

ԻՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ՝
ՓՈԽԱՆ ՆԻԻԹԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ

Ֆուտբոլի կամ մարզական որեւէ խմբային խաղի պարագային բնական է, որ անհրաժեշտ կարիք մըն է նիւթակալը:

Գերմանիոյ մէջ, սակայն, հրաշք կը պատահի Պերլինի Հերթային հետ: Անցեալ տարեշրջանի աւարտին, Հերթա Պերլին, որ Բ. դասակարգի «Պոնտեպիկա»-ին մաս կը կազմէ, իր բոլոր աստղերը կորսնցուց, մասնաւոր բոլոր հովանաւորները կորսնցնելէ ետք:

Սակայն հակառակ բան մը պատահեցաւ, եւ այժմ 5 մրցումներէ ետք Հերթա կը գրաւէ պարագլուխի դիրքը՝ 5 յաջորդական յաղթանակներ արձանագրելէ ետք:

Հերթա Պերլինի յաջողութեան գծով որեւէ մասնագէտ հաւատք չուներ: Մեծ թիւով մարզիկներ լքած էին անցեալ ամրան եւ խումբին մէջ մնացած էին պահեստի անփորձ մարզիկները:

Ֆուտբոլի մէջ հրաշք հազուադէպօրէն կը պատահի, բայց ըստ երեւոյթին, կրնան ըլլալ հրաշքներ:

Հերթա Պերլին ոչ միայն կրցած է յաղթել իր 5 մրցումները, այլ նաեւ բաժակի մրցաշարքին ալ անցած է յաջորդ հանգրուան, մասնաւոր երբ բոլորը կը սպասէին ամօթալի պարտութեան մը եւս, ինչպէս կը պատահէր վերջին տարիներուն:

Հերթա Պերլինի պատմութիւնն ալ այլքանս փայլուն չէր, եւ այժմու արդիւնքները պատմութեան անցան: Հերթա բնաւ իր ախոյեանութեան 5 մրցումները չէ յաղթած եւ 2013-ի մայիսէն ի վեր

առաջին անգամ ըլլալով կը գրաւէ Բ. դասակարգի առաջին դիրքը: Այդ տարին խումբը կրցած էր բարձրանալ առաջին դասակարգ:

Հետաքրքրականը այն է, որ Բ. դասակարգէն ոչ մէկ խումբ այսքան մեծ թիւով մարզիկներ կորսնցուցած է: Զենեթ Եխհորն, որ խումբին թիւ 1 աստղն էր, միացած էր Պայեր Լենթրուզընին, խմբապետ Ֆապիեն Ռիս միացած էր Վոլֆըսպուրկին, բերդապահ Թիարք Էրնսթ միացած էր Ֆլեյսուրտ Ռոթերտամին, աջ ծայրի յառաջապահ Մարթեն Վիլքշեր՝ Անտերլէյթին: Փլէյմեյքըր Միքայէլ Զոփասնս Լանսին միացած էր:

Հակառակ անոր որ Հերթա ձեռք ձգած էր մօտ 30 միլիոն եւրօ՝ մարզիկներու փոխարէն, բայց անոնք անցեալ տարեշրջանին պարտութիւն ունէին, եւ խումբին նիւթական պայմաններուն պատճառով միայն մէկ մարզիկ կրցան ձեռք ձգել, այդ ալ 150 հազար եւրոյի փոխան՝ Մատս Փետերսընը:

Բ. դասակարգ Նոր բարձրացած Էնթրի Զոթպուս միայն աւելի քիչ ծախսած էր այս տարեշրջանին՝ ձեռք ձգելու համար մարզիկներ:

Մեծ գումարներու փոխարէն, ակումբը որոշած էր Նոր ձեւ որդեգրել, վստահիլ երիտասարդ մարզիկներու, քիչ թիւով մարզիկներով կազմել խմբակ մը, որ պայքարի ակումբին համար:

Հերթա կրնայ «աղքատ» խումբ մը ըլլալ այսօր, բայց անիկ «անօթի» է յաղթանակի եւ լաւ արդիւնք կը ցուցաբերէ:

«ԵՆՐՈՐՓԱ ԼԻԿ»

ԱՅՍՕՐ՝ ԱՐԱՐԱՏ ԱՐՄԵՆԻԱ - ՍՓԱՐԹԱ ՓՐԱԿԱ

Այսօր երեկոյեան «Վազգէն Սարգսեան»-ի անաւան հանրապետական մարզադաշտին վրայ Հայաստանի ախոյեան Արարատ Արմենիա «Եու. Է. Էֆ. Ա.»-ի կազմակերպած «Եւրոփա լիկ»-ի առաջին հանգրուանին գծով պիտի հիւրընկալէ Զեխիոյ ախոյեան Սփարթա Փրակա:

«Եու. Է. Էֆ. Ա.»-ի պատմութեան ընթացքին առաջին անգամ ըլլալով հայկական ակումբ մը կը հասնի եւրոպական 3 բաժակներու մրցաշարքերուն, անշուշտ Հայաստանի անկախութենէն եւ 1992-ին «Եու. Է. Էֆ. Ա.»-ին միանալէ ետք:

Մանուէլ Թուլիփայի գլխաւորած խումբը լաւ ձեւով սկսաւ Հայաստանի ախոյեանութիւնը եւ Նոայի հետ կը մրցի պարագլուխի դիրքին համար, «Զեմփի-ընզ լիկ»-էն դուրս մնացած էր Յելիէ խումբին դէմ մրցումին, ապա Ռումանիոյ Ունիվերսիթաթէա Զրայովային յաղթելէ ետք գտումի իր վերջին մրցումին հասած էր «Եւրոփա լիկ»:

Պէտք է ըսել, որ Արարատ Արմենիա իր դաշտին վրայ միայն 2 պարտութիւն կրած է 11 մրցումներուն, զորս եւրոպական խումբերու դէմ խաղցած է այս տարեշրջանի բաժակներուն:

Սփարթա Փրակա իր կարգին Լիոնի դէմ պարտու-



ելէ ետք դուրս մնացած էր «Զեմփի-ընզ լիկ»-էն, բայց այս տարի բաւական ծախող ելոյթ կ'ունենայ Զեխիոյ ախոյեանութեան ծիրին մէջ, ուր կը գրաւէ դասաւորման 9-րդ դիրքը 16 խումբերու մէջ:

Արարատ Արմենիայի մարզիկ Արայիկ Էլոյեան իր վերջին երեք մրցումներուն 4 կոլ նշանակած է, մինչ Սփարթա Փրակայի մարզիկ ժոսիմար Ալսոսերը իր խումբի կոլ-սքորըրն է: Արարատէն կը բացակայի ազգային խումբի միջնապահ Կամօ Յովհաննիսեան (վիրաւոր), մինչ Սփարթայէն՝ Զի-Եսնա Հովեր:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՐՐԻԷԼԵԱՆ ԱՌԱՆՑ ԴԱԴԱՐԻ
ՍԵԻԱՆԱՅ ԼԻՃԸ ԿՏՐԵՑ ԱՄԲՈՂՋ ԵՐԿԱՅՆՔՈՎ

Յովհաննէս Գարրիէլեան բացառիկ մրցանիշ հաստատեց, երբ առանց դադարի լողալով Սեւանայ լիճը կտորեց ամբողջ երկայնքով:

Գարրիէլեան յաղթահարած հեռաւորութիւնը, ըստ «Արմենիփրես»-ի, 74 քիլոմէթր էր: Ան անդադար լողալով մօտ 34 ժամէն հասաւ ծովագիւղի Փիրուզէ լողափ:

Գարրիէլեանի ընկերները զինք դիմաւորած են անոր յանձնելով խորհրդանշական մետալ մը: Վըստահաբար, եթէ «Կինես» մրցանիշներու գիրքի ներկայացուցիչներ ներկայ ըլլային, անոր անունը կրնար արձանագրուիլ պատմական մրցանիշներու կողքին:

Գարրիէլեանի վիճակը լաւ է այժմ, ան որոշ ժամանակ բժշկներու հսկողութեան տակ պիտի մնայ՝ վերականգնելու համար իր ուժերը:



ԾԱՏՐԱԿ

ԷՄԻՆ ՕՀԱՆԵԱՆ
ՔՐԱՅՈՎԱՅԻ
ԿՐԱՆ ՓՐԻ ՄՐՑԱՇԱՐՔԻ
ԱՌՈՅԵԱՆ

2024-ի երիտասարդներու աշխարհի ախոյեանութեան արծաթ մետալակիր Էմին Օհանեան (19 տարեկան) նուաճեց Ռումանիոյ մէջ տեղի ունեցաւ Զրայովայի կրան փրի արագ ճատրակի տիտղոսը:

Այս մրցաշարքին կը մասնակցէին 15 երկիրներէ 305 ներկայացուցիչներ: Օհանեան կարելի 10 կէտերէ 8,5 կէտ ձեռք ձգեց եւ առանց պարտուելու դար-



ձաւ տիտղոսակիր: Մրցանակակիրներու շարքին էր նաեւ հայ վարպետ մը եւս՝ Մամիկոն Ղարիբեան, որ 7,5 կէտերով գրաւեց 10-րդ դիրքը:

ԾԱՆՐԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ՊԻՏԻ ՄԱՄՆԱԿՅԻ ԱՇԽԱՐՀԻ
ԱՌՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 14 ԾԱՆՐԱԲԱՐՁԵՐՈՎ

Ծանրաբարձութեան միջազգային ֆետերասիոնը ներկայացուց 2026-ի աշխարհի ախոյեանութեան մասնակից երկիրներու նախնական ցանկէն ըր:

Հայաստանի հաւաքականը աշխարհի ախոյեանութեան պիտի մասնակցի 14 ծանրաբարձով՝ 8 տղաք եւ 6 աղջիկներ:

Յակոբ Փիլոսեանի գլխաւորած տղոց հաւաքականին մաս կը կազմեն Գառնիկ Չոլակեան (65 քկ), Գոռ Սահակեան (70 քկ), Ռաֆիկ Յարութիւնեան (85 քկ), Մարտին Պօղոսեան (85 քկ), Դաւիթ Յովհաննիսեան (95 քկ), Արա Ադանեան (95 քկ), Գարիկ Կարապետեան (110 քկ) եւ Վարազդատ Լալայեան (110 քիլոկրամէն վեր):

Տիգրան Կարապետեան (75 քկ), Նարեկ Սկրտչեան (85 քկ), Սուրեն Գրիգորեան (95 քկ) եւ Պետրոս Պետրոսեան (11 քկ) պահեստի մարզիկներ են:

Ողիմպիական խաղերու երկու անգամ փոխախոյեան, աշխարհի եւ եւրոպայի երկու անգամ ախոյեան Սիմոն Մարտիրոսեան աշխարհի ախոյեանութեան պիտի չմասնակցի վիրաւոր ըլլալուն պատճառով:

Գերծանր կշիռի մրցումներու Պահրէյնի հաւաքականէն կը մասնակցի Ողիմպիական խաղերու արծաթ մետալակիր, աշխարհի եւ եւրոպայի փոխախոյեան Գոռ Միկասեան:

Հակառակ իր ասպարէզը աւարտելուն, պիտի մասնակցի նաեւ վրացի Լաշա Տալախաձե, որ 3 անգամ Ողիմպիական խաղերու ոսկի մետալակիր, աշխարհի եւ եւրոպայի 7 անգամ ախոյեան է:

Միւս կողմէ, Արտաշէս Ներսիսեանի գլխաւորած աղջկանց հաւաքականին մաս պիտի կազմեն Ալեքսանտրա Գրիգորեան (61 քկ), Մերի Միսաբեան (69 քկ), Աննա Ամրոյեան (77 քկ), Ալիսա Սուքիասեան (77 քկ), Էմմա Պօղոսեան (86 քկ) եւ Լիանա Գիւրջեան (86 քկ):

Աշխարհի ախոյեանութեան մրցումները գտումի մրցումներու համագոր պիտի ըլլան Լոս Անճելըսի 2028-ի Ողիմպիական խաղերուն համար:

Նշենք, որ աշխարհի ծանրաբարձութեան ախոյեանութիւնը տեղի պիտի ունենայ 27 հոկտեմբերէն 8 նոյեմբեր՝ Չինաստանի Նիսիպօ քաղաքին մէջ:

ՔՐՈՑԵԱՍՈՐՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՔԱԿԱՆՆԵՐԸ
ԿԸ ՄԱՄՆԱԿՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ



Սոֆիայի մէջ (Պուկկարիա) սկսաւ բռնցքամարտի ախոյեանութիւնը: Հայաստանի բռնցքամարտի ֆետերասիոնը շաքաթավերջին հրապարակած էր տղոց եւ աղջկանց հաւաքականները, որոնք պիտի մասնակցին այս կարեւոր միջազգային ախոյեանութեան:

10 տղաք եւ երեք աղջիկներ իրենց մասնակցութիւնը կը բերեն Եւրոպայի ախոյեանութեան՝ հետեւեալ ձեւով.

ՏՐԱՔ

50 քկ - Ռուտուֆ Գարբոյեան
55 քկ - Ժիրայր Սարգսեան

60 քկ - Արթուր Բազեան
65 քկ - Արթուր Սահակեան
70 քկ - Յարութիւն Յակոբկոխեան
75 քկ - Մարատ Միքայէլեան
80 քկ - Արտուշ Յովհաննիսեան
85 քկ - Ռաֆայէլ Յովհաննիսեան
90 քկ - Նարեկ Միկասեան
90 քիլոկրամէն վեր - Դաւիթ Չալոյեան
ԱՂՅԻԿՆԵՐ
48 քկ - Հեղինէ Պետրոսեան
54 քկ - Լուսիա Աւետիսեան
66 քկ - Էլիզա Զոչարեան
Նշենք, որ Եւրոպայի ախոյեանութիւնը կ'աւարտի 26 սեպտեմբերին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ . . .

Շարունակումս Ա. Էջեն

«Մենք զինաթափման հետ ենք, սակայն զինաթափումը պիտի ջաջողի՝ ապաւինելով օտարերկրեայ ուժերուն եւ վնասելով լիբանանեան հիմնարար բաղադրիչին», յայտնեց ան:

«Պետական ամսվարըը ապացոյց է, որ կառավարութիւնը տագնապը կը կառավարէ եւ ոչ թէ կը լուծէ», շեշտեց Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավարը:

Պասիլ խօսքը վարչապետ Նաուաֆ Սալամին ուղղելով ըսաւ. «Ձեր կառավարութիւնը առանցքներու, սադրանքի, անձնատուութեան եւ տուրքերու կառավարութիւն է»:

Երեսփոխան Ժամիլ Սեյիտ Նշեց. «Միջազգային դրամական ֆոնտին մօտ ճորտերու վերածուեցանք: Ծառայութիւններ չեն մատուցուիր, իսկ կացութիւնը կը վատթարանայ»:

«Ստորագրուեցաւ շրջագծային համաձայնութիւն մը, եւ խորհրդարանին ոչինչ փոխանցուեցաւ: Այս համաձայնութիւնը գործադրելի դասաւորումներ ունի, որոնք հետեւանքներ պիտի ունենան, ուստի հակասահմանադրական է»:

Երեսփոխան Իպրահիմ Զաւաան յայտնեց. «Զօրակցեցանք բանակցութիւններուն՝ պատերազմը դադրեցնելու, Լիբանանի իրաւունքները ամրապնդելու եւ որպէսզի պատերազմի ու խաղաղութեան որոշումը պետութեան ձեռքը ըլլայ: Չենք կրնար բանակէն պահանջել իր պարտականութիւնը կատարել առանց անհրաժեշտ քաղաքական մթնոլորտի ու ֆինանսաւորումը ապահովելու»:

«Կը վստահիմք այն ինչին, որ Նախագահ Ժոզեֆ Աունն ու բանակի հրամանատար զօր. Ռուտոլֆ Յայքալը պիտի տան Փարիզ», ըսաւ ան:

Զաւաան Նաե Նշեց. «Խորհրդարան լոր տուրքերու եւ հարկերու վրայ հիմնուած ամսվարկ մի՛ դրկէք: Մենք պիտի

չընդունինք լիբանանցի ժողովուրդի գրպանի չարաշահումը՝ իրեւ վատնումներու, հարկերէն խուսափելու եւ փտածութեան դէմ պայքարի փոխարինող»:

Ան Նաե գգուշացուց. «(Կառավարութեան տրուած) վըստահութիւնը ամենաթողութիւն չէ»:

Զօր Յանրապետութիւն երեսփոխանական պլոքի Նախագահ Ժորժ Ատուան վարչապետ Նաուաֆ Սալամին ըսաւ. «Կրնայ ոմանց համար ըրածդ անհանդուրժելի ըլլալ, սակայն լիբանանցիները կը պահանջեն, որ ձեր ըրածը շարունակէք»:

«Կարելոր հարցում մը ունիմ. ինչպէ՛ս դուն ու կառավարութիւնը կը յանդգնիք զենքի մենաշնորհ կատարել: Ատիկա անընդունելի է, եւ պետք է քեզ այդ հարցին համար հարցանութեան ենթարկել, որովհետեւ քեզմէ առաջուանները այդ մէկը չկատարեցին», հեզնաբար ըսաւ ան:

Զաւատարմութիւն դիմադրութեան երեսփոխանական պլոքի անդամ Իպրահիմ Մուսաուի Նշեց. «Կը հարցնեք՝ Դիմադրութիւնը ի՞նչ ըրաւ, իսկ մենք կը հարցնենք՝ պետութիւնը բանակը զինելու եւ հողը պաշտպանելու համար ի՞նչ ըրաւ»:

Երեսփոխան Ֆուատ Մախզումի Նշեց. «Զարաւային Լիբանանը աղետեալ շրջան է, եւ լիբանանեան հողը տակաւին բռնագրաւուած է: Այս ողբերգութիւնը հետեւանք է Զըզպալայի զենքին ու Իրանին անոր ստրկութեան, եւ անհրաժեշտ են զենքը վերահսկելու յստակ ու որոշակի մեքանիզմներ»:

«Կառավարութեան աջակցութիւնս կը յայտարարեմ ու կը վերահաստատեմ

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

Շարունակումս 2-րդ էջէն

• «ՆԻՏԱ ՌԻԱԹԱՆ» օրաթերթը. «Նախագահական պալատը կառավարութեան տապալման նկատմամբ որեւէ մտավախութիւն չի ցուցաբերեր, որովհետեւ խորհրդարանական խիստը ժողովրդավարութեան մէջ բնական է, եւ բոլոր ցուցանիշները ցոյց կու տան, թէ կառավարութիւնը պիտի տոկայ, որովհետեւ խորհրդարանական մեծամասնութիւն կը վայելէ, եւ անոր նկատմամբ անվստահութիւն յայտնելու կարող մեծամասնութիւն գոյութիւն չունի»:

• «ՆԻՏԱ ՌԻԱԹԱՆ» օրաթերթը. «Այսօրուան նիստին ընթացքին Զօր Յանրապետութիւն երեսփոխանական պլոքի գլխաւորութեամբ գերիշխանութեան կողմակից երեսփոխաններու մեծ խումբ մը հարցումներ պիտի ուղղէ կառավարութեան որոշումներու կայացումէն ետք եկող փուլին եւ այն մասին, թէ արդեօք իրականութեան մէջ քայլեր ձեռնարկա՞ծ են զանոնք գործադրելու համար զինուորական, ապահովական, դատական, ֆինանսական եւ վարչական հաստատութիւնները աշխուժացնելու համար»:

• ԼԱԲԱՏԵՐՆԱԿ աղբիւրներ «Տիար» օրաթերթին. «Նախագահ Աուն դժգոհ է Նախարարներու մեծամասնութեան գործունեութենէն եւ կը քննադատէ վարչապետի գործունեութիւնը, մասնաւորաբար ապրուստի եւ տնտեսական հարցերուն մէջ, ուր ի յայտ կու գայ անկարողութիւնը որեւէ լուծում ներկայացնելու բոլոր թղթածրարներուն մէջ, որոնք հետըզհետէ անելի կը վատթարանան»:

• ԱՅՆ ԹԻՆԷԻ մօտիկ աղբիւրներ «Տիար» օրաթերթին. «Խորհրդարանի Նախագահ Պըրրիի եւ վար-

չապետ Սալամի միջեւ յարաբերութիւնները իրենց լաւագոյն վիճակին մէջ չեն թուիր: Պըրրիի դիտարկումները ապրուստի թղթածրարներուն մէջ ձախողութենէն անդին անցնելով կը վերաբերին Սալամի քաղաքական գործունեութեան, որ հարցերը կը բարդացնէ եւ անոնց լուծման չի նպաստեր»:

• ԼԱԲԱՏԵՐՆԱԿ աղբիւրներ «Անպա» օրաթերթին. «Կարգ մը պետութիւններու, Նախ եւ առաջ Ֆրանսայի լիբանանեան բանակին աջակցելու խանդավառութիւնը կը բախի Իսրայէլի աջակցող ամերիկեան դիրքորոշումին, ինչ որ ժողովը կը մղէ բանակի եւ ապահովական ուժերու կարիքներու ներկայացումով բաւարարուելու, առանց իրողական բեկում մը կատարելու»:

• «ԼԵՊԱՆՈՆ ՖԱՅԼԶ»-Ի տեղեկութիւններուն համաձայն, Վատիկանը մտահոգութիւն կը յայտնէ հարաւային Լիբանանի մէջ բնակեցուածներու հաստատման կարելիութեան վերաբերեալ՝ այս կարելիութեան դիմակայման վերաբերեալ լիբանանեան յստակ պատասխաններու բացակայութեան լոյսին տակ:

• ԼԻԲԱՆԱՆԻ մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Միշէլ Իսա հարաւային Լիբանանի շաուբար Դարալիէ եւ Զահեաիիթ ժըս գիւղեր այցելեց:

• 95 եւ 98 օքթան պենզինի գիւները բարձրացան 39000 լ.ո.-ով եւ յաջորդաբար հասան 2.718.000 լ.ո.-ի եւ 2.736.000 լ.ո.-ի, մագութին գիւը բարձրացաւ 102000 լ.ո.-ով եւ հասաւ 2.641.000 լ.ո.-ի, իսկ պիթեակահին գիւը բարձրացաւ 31000 լ.ո.-ով եւ հասաւ 1.221.000 լ.ո.-ի:

անոր նկատմամբ վստահութիւնս», ըսաւ ան:

Երեսփոխան Մարք Տաու խօսքը կառավարութեան ուղղելով Նշեց. «Պետք է կառավարութեան մէջ անելի արագ շարժիք եւ մարդոցմէ չպահանջէք անելի համբերել»՝ անցընելով. «Վարչապետ Նաուաֆ Սալամի կառավարութեան աջակցեցայ, եւ տակաւին կը գնահատեմ կատարած քայլիս արժեքը»:

Փաղանգաւոր կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Սամի Ժեմայէլ յայտնեց. «55 տարի անցաւ եւ չկրցանք պետութիւն կառուցել, այս կառավարութիւնը առաջինն է, որ յըստակ ու ճիշդ որոշում ունի լիբանանեան հողերուն մեծ մասին վրայ պետութեան վերահսկողութեան հաստատման գծով»:

Ան խօսքը վարչապետ Սալամին ուղղելով Նշեց. «Եթէ ծախողիք, Լիբանանը դէպի քայքայում եւ Սոմալի վերածուելու պիտի ուղղուի: Ես ահագանգ կը ինչեցնեմ: Զեզի հրաժարիր պիտի չըսեմ, այլ ձեռքերդ սղոթե, եւ պետութեան, սահմանադրութեան եւ օրէնքի հեղինակութիւնը բոլորին պարտադրե, եւ թէ այս պատասխանատուութիւնը չկրես, ոչ ոք զայն պիտի կրէ: Մի՛ կարծեր, թէ այս կառավարութեան այլընտրանքը պիտի գայ, այլ՝ երկիրը դէպի քայքայում պիտի ուղղուի»:

Խորհրդարանի Նախագահ Նեպիի Պըրրի կէսօրէ ետք փակեց խիստը, որ այսօր կէսօրէ առաջ ժամը 11:00-ին պիտի շարունակուի:



Կազմակերպութեամբ
«Յակոբ Տեր Մելքոնեան»
Թատերասրահի Վարչութեան

ԵՐԵՒԱՆԵԱՆ ԵՐԵՎԱՅ

երգահանդէս



Ելոյթ կ'ունենան՝ Նորայր Գազանճեան, Շաքէ Պաղտասարեան, Սոնա Մանճիկեան, Ղազար Զեօշկերեան եւ Սերժիօ Սիարոնեան, մասնակցութեամբ լիբանանահայ երաժիշտներու, ղեկավարութեամբ՝ Սեդօ Պաղտասարեանի:

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 21 Սեպտեմբեր 2026-ի երեկոյեան ժամը 8:00-ին, «Յ. Տեր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

Տոմսերը ապահովել հեռաձայնելով 03 852712 թիւին եւ կամ ելոյթին օրը՝ կիշէն:

Սակ՝ 10\$

ՍՈՒՍԱՆ ԼԵՌ - 101 ԱՅՆԱՐ - 87

Կազմակերպութեամբ՝ Այնճարի քաղաքապետական խորհուրդին

ԵՐԳԻ ՓԱՌԱՏՈՒ

Մասնակցութեամբ՝



ԱՐԱՄ ՆԱՐԵԱ



ՍԵՐԺ
ՊԱՐՏԱՍԱՐԵԱՆ



ՇԱԶԷ
ՊԱՐՏԱՍԱՐԵԱՆ



ՍԵՐՇ
ԱՆԱՐՈՆԵԱՆ



ՍՈՒԱ
ՍԱՆՃԻԿԵԱՆ



ՂԱԶԱՐ
ԶԵՕՇԿԵՐԵԱՆ

DJ SHIRAZ

ԱՅՐԱՒ ԱԲԻԼ
ՀԻՆԴԱԲԵԹԻ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2026
Ժամը 8:30-ին, Ղալար ԱՆԿԻՆ

ՀՐԱԻՐ

10

ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐ

ԱՅՆԱՐԵՆ

Հովանաւորութեամբ՝ Հ.Յ.Գ. «Կարմիր լեռ» կոմիտէի դատարարական յանձնախումբին, Կազմակերպութեամբ՝ Համազգայինի Այնճարի «Գ.Սեւակ» մասնաճիւղի վարչութեան,

Գեղանկարչական ցուցահանդէս՝ գեղանկարիչ Կարպիս Քէնտիրճեանի

Բացումը տեղի կ'ունենայ Ռինգաբի 17 Սեպտեմբեր 2026-ին երեկոյեան ժամը 7:00-ին Ս. Պօղոս եկեղեցոյ «Գ. Կիւլէնկեան» սրահէն ներս:

Ծանօթ. ցուցահանդէսը բաց կը մնայ Ուրբաթ, 18 Սեպտ. երեկոյեան ժամը 5:00-էն 8:00, Ծաբաթ՝ 19 Սեպտ.-երեկոյեան ժամը 5:00-էն 12:00 Կիրակի 20 Սեպտ. առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. 2:00

Հրաւեր

ԱՅՍՕՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ
Radio Voice of Van - Վանայ Ձայն FM: 94.7 եւ 95 MHz

7.00- Զայլերգներ / Առաւօտ լուսոյ	4.00- «Ժունտի»
7.03- Բարի լոյս	4.30- Արաբերէն երգեր
7.15- Հանդարտ երգեր	5.00- «Վանայ Ձայն»-ը երեկոյեան
7.30- «Երկու բարեւ»	5.05- Հայրենի սիրուած երգիչներու կատարումներ
8.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ	6.00- Ազգագրական-տոհմիկ երգեր
9.00- «Երկու բարեւ»	6.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ
10.00- Ժողովրդային երգեր	6.50- Ժողովրդային երգեր
10.30- Հայկական աշխարհի լուրեր (ուղիղ՝ դիմատեսքով)	8.00- Օրուան երգիչ (Ճորճ Պաղտոյեան)
10.45- Նոր երգեր	8.30- «Կենաց ծառ» (Սովետ Ծիրանիի հետ)
11.00- «Հայեացք Երեւանից», Վահագն Չաքարեանի հետ (ուղիղ՝ դիմատեսքով)	9.15- «Երգ-երգոց»-ի կատարումներ
11.30- Սփիւռքահայ երգիչներու կատարումներ	9.30- Հայկական աշխարհի լուրեր (կրկ.)
12.00- Ռատիօ-թատրոն	9.45- Չուգերգներ
12.20- Չուգերգներ	10.00- Նոր երգեր
1.00- Ազգային-հայրենասիրական երգեր	11.00- Ֆրանսական երեկոյ
1.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ	12.00- Յիշատակելիները / Յեղափոխական երգեր
2.00- «Յիշատակելիները» (Սիմէն Շիւեանց)	2.00- Խանդավառ երգեր
2.05- Յեղափոխական երգեր	3.00- Կրկնութիւններ
3.00- «Զըլ եմ պիոյմու» (ուղիղ՝ դիմատեսքով)	4.00- Հայերէն այլազան երգեր
	6.00- Հանդարտ երաժշտութիւն

Ձեր մնայուն ընկերակիցը **Radio Voice of Van:Live**

DOWNLOAD

Google Play App Store

